№ 5 ՇԱԲԱԹ ՅՈՒՆՎԱՐԻ 14 **1895** ՇԱԲԱԹ ՅՈՒՆՎԱՐԻ 14 № 5

ՔՍԱՆԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԾՂԱԼՕՐ ԻՎԱՆԻՋ ԿՕՐԳԱՆԵԱՆ և իր դուստր ՆՈՒՆԷ ՄԷԼԻՔ-ՓԱՐՍԱԴԱՆԵԱՆ, ցաւօք սրտի յայտնելով առաջինը իր սիրելի ամուսնու, իսկ երկրորդը իր մօր՝

ԵՂԻՍԱԲԷԹ ԼԱԶԱՐԵԱՆ ԿՕՐԳԱՆԵԱՆԻ

մահը, խնդրում են ծանօթներին և ազգականներին շնորհ բերել յուղարկաւորութեանը, կիրակի, ամսիս 15-ին, առաւօտեան 10 ժ., իր տնից, Նազօրնայա փողոցի վրա, № 8, դէպի Մողնու ս. Գէորգ եկեղեցին: Հոգեհանգիստը լինելու է շաբաթ, յունվարի 14-ին, երեկոյեան $6^1/_2$ ժամին: 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ֆրանսիական մամուլը և Թիւրքահայոց հարցը. Պոլէմիկա դատաստանական բէֆօրմների առիթով. Հեռագիր ռուսաց գործակալութեան. Մամուլի կարծիքը հայերի մասին. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պետերբուրգում գումարված ժողովը. Հայոց Թաղրօն. Նամակ Պետերբուրգից. Նամակ Ալէքսանդրօպոլից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գլադստոնի ծննդեան ութսունամեակը. Նամակ Թիւրքիայից. Նամակ Թիւրքիայից. Նամակ Պարսկաստանից. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գաղթականներ.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ ԵՒ ԹԻՒՐՔԱՀԱՅՈՑ ՀԱՐՑԸ

—

Ֆրանսիական լրագիրները քանի գնում աւելի մեծ համակրութեամբ են սկսում վերաբերվել հայոց հարցին: Այնպիսի առաջնակարգ լրագիրներ, ինչպէս օրինակ, „Temps“, „Figaro“, „Journal des Débats“, „Justice“ նուիրում են մեծ յօդուածներ հայկական խնդրին. նոյնն են անում և ամսագիրները, ինչպէս „Revue des deux Monds“ ամսագիրը, „Nouvelle Revue“ և այլն:

Պարիզի „Journal des Débats“ լրագիրը իր դեկտեմբերի 27-ի համարում տպել է մի ընդարձակ յօդուած „Հայաստանի գործերը“ վերնագրով, որի մէջ մանրամասն կերպով նկարագրելով Սասունի դէպքերի առիթով եղած միջազգային բանակցութիւնները, ուրախութիւն է յայտնում քննիչ յանձնաժողով նշանակելու մասին և վերջացնում է այսպէս. „Մնում է միայն սպասել քննիչ յանձնաժողովի և դեսպանների զեկուցումներին: Այն ժամանակ կունենանք հաստատ տեղեկութիւններ այն արիւնահեղ դէպքերի մասին, որոնք տեղի են ունեցել Հայաստանի մի մասում: Գուցէ նրանք չափազանցրած են: Բայց ինչպէս էլ որ լինի, Անգլիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի ցոյց տուած տրամադրութիւնը և եղած բանակցութիւնները ապացուցանում են, որ բոլոր պետութիւններն էլ հաւասարապէս ցանկութիւն ունեն հսկել Բերլինի դաշնագրի 61 յօդուածի գործադրութեան վրա, առանց մասնաւոր շահեր որոնելու և առանց դիպչելու սուլթանի բարձր իրաւունքներին:“

Նշանաւոր „Figaro“ լրագիրը իր յունվարի 2-ի համարում տպագրել է Լուի Լամբերի մի մանրամասն յօդուած, „Հայկական հարցը և Սասունի կոտորածները“ վերնագրով: Այդ յօդուածի առիթով խմբագրութիւնը հետևեալն է ասում: „Մի ճանապարհորդ, որը երէկ եկել է կ. Պոլսից և որը հիմնաւորապէս ծանօթ է փաքր Ասիայի տաճկական գաւառների դրութեանը, հաղորդում է մեզ Հայաստանի կոտորածների մասին հետևեալ տեղեկութիւնները, որոնց կատարեալ ճշդութիւնը մենք կարող ենք երաշխաւորել:“

Յօդուածագիրը պատմում է ամբողջ եղելութիւնը համարեա այնպէս, ինչպէս այդ յայտնի է հայոց լրագիրներից, նկարագրում է Թաքսին փաշայի և Զէքի փաշայի սխրագործութիւնները, նոյնպէս և քրդերի ու կանոնաւոր զօրքերի կատարած դերը այդ կոտորածներում: Ապա խօսելով միջազգային բանակցութիւնների և քննիչ յանձնաժողովի մասին, հեղինակը վերջացնում է յօդուածը հետևեալ խօսքերով. „Անգլիան և Ռուսաստանը փաքր Ասիայում ունեն զանազան, եթէ չասենք հակառակ շահեր. իսկ Ֆրանսիան, որը այս դէպքում միմիայն մարդասիրական զգացմունքով է զեկավարվում, կը պահանջի անկողմնապահ քննութիւն: Նա չէ կարող մոռանալ իր դարաւոր դերը Արևելքում, որտեղ բոլոր եւրօպացիները դեռ էս կոչվում են ֆրանգներ և որտեղ մեր լեզուով խօսում են համարեա ամեն տեղ: Մեր ներկայացուցիչը քննիչ յանձնաժողովում ունի առանձին բարոյական հեղինակութիւն և Սասունի այս ցաւալի և տրագիքական գործում նա կը կատարի ամենանաչառ քննիչի դերը:“

„La Marine Francaise“ ամսագիրը իր արտաքին տեսութեան մէջ ասում է հետևեալը. „Հիւանդ մարդը“ (այսինքն Տաճկաստանը) նորից առիթ է տալիս խօսել իր մասին և նորից եւրօպական պետութիւնները հրաւիրված են նրա մահճի մօտ: Ի՞նչ դուրս կը գայ այդ նոր խորհրդակցութիւնից: Ահա հէնց այդ բանը դժուար է նախատեսել: Հայաստանի գործերը արդեօք առաջ կը բերեն մի նոր բաժանումն օսմանեան կայսրութեան: Լօնդօնը պատասխանում է՝ այո՛. Պետերբուրգը ասում է՝ ո՛չ. Պարիզը և Բերլինը ասում են՝ գուցէ: Պէտք է սպասել:“

Ապա ամսագիրը աւելացնում է. „Սարսափելի կոտորածներ են տեղի ունեցել Բիթլիսի վիլայեթում տաճիկ զինուորների ձեռքով: Խօսում են մինչև անգամ, որ 15 հազար մարդ է սպանված: Հայերը, որոնք բնակվում են Եւրօպայում, կազմում են ժողովներ մէկը միւսի յետևից, որպէս զի պահանջեն պետութիւններից ներգործական և անմիջական օգնութիւն իրանց թշուառ հայրենակիցներին: Վերջապէս խօսելով քննութիւն կատարելու մասին, ֆրանսիական ամսագիրը աւելացնում է. „Յամենայն դէպս ոչ մի կասկած չը կայ, որ եւրօպական պետութիւնները ունեն լիակատար իրաւունք միջամտել Հայաստանի գործերում: Բերլինի դաշնագրի 61 յօդուածը տալիս է պետութիւններին բացարձակ իրաւունք, և եթէ հայերի սարսափելի մեղադրանքները հաստատվեն, այն ժամանակ պէտք է գործել ամենայն խստութեամբ և համերաշխութեամբ: Մեզ թվում է, եթէ կոտորածները իսկապէս տեղի են ունեցել, թիւրքերը մեղաւոր են դրանում: ամենալաւ վճիռը կը լինէր անջատել Հայաստանը օսմանեան պետութիւնից և նրանից կազմել առանձին օսմանեան նահանգ՝ Բերլինի դաշնագիրը ստորագրող պետութիւնների իսկական հովանաւորութեան տակ:“

Համակրութեամբ են վերաբերվում Թիւրքահայոց հարցին նոյնպէս և „Temps“, „Courriere du Soir“, „Matin“ յայտնի լրագիրները, նոյնպէս և ուրիշ երկրորդական շատ լրագիրներ:

ՊՕԼԷՄԻԿԱ ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ՐԷՖՕՐՄՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

III

Որպէս զի բացայայտ կերպով ցոյց տանք թէ որքան միակողմանի, սխալ և կանխակալ են „Кавказъ“ լրագրի առաջ բերած պատճառաբանութիւնները և թէ նրա արտայայտած կարծիքները հիմնված չեն խնդրի լուրջ և բարեխիղճ ուսումնասիրութեան վրա, մենք առաջ կը բերենք հետևեալ փաստը:

Երբ 30 տարի առաջ հարց ծագեց Ռուսաստանում երդուեալ դատաւորների ինստիտուտը մտցնելու մասին, այդ հարցը ունեցաւ իր ամենաթունդ հակառակորդները և ջատագովները: Գլխաւոր հակառակորդներից մինը, կոմս Բլիւդով, այն կարծիքն արտայայտեց ռուս ժողովրդի մասին, ինչ որ հրացանը և այդ այն վնասը հասցրեց, որ առաջին անգամ իսկ հայերից մէկը զարնվեց գլխից և գնաց թաւալգլոր դէպի ցած:

Ցանկարծ Կարօն էլ ձեռքիցը բաց թողեց հրացանը, յետոյ բարձրացաւ, ձեռքը գլխին տարաւ և—զարնվեցի՛... գոռալով, ետ ընկաւ:

Ոչ ոք ուշադրութիւն չը դարձրեց նրանց վրա, Պետրոսը և միւսները կրակում էին անդադար: Քիւրդերը մի քանի քայլ էին միայն բարձրացել և սակայն պարզ երևում էր, որ չուտով գրաւելու էին քարայրները, մանաւանդ որ անհնար էին դարձնում իրանց զարնելը թագնվելով, և դաշտի վրա կանգնածներն էլ ջլատում էին հայերի ոյժերը:

Պետրոսը ետ նայեց, մնացել էին միայն իրենով՝ չորս հոգի. Նաղենիկը ոչինչ, նա ոչ զէնք բռնել գիտէր և ոչ էլ սիրտ ունէր: Սասունցի կին խօ չէր:

Նա կանգ առաւ. պէտք էր քարայրներից դուրս գալ, որովհետև մի տաս րոպէ ևս, և ամեն ինչ վերջացած կը լինէր, կը բռնվէին վանդակի մէջ եղող թռչունների նման, առանց կռուել իսկ կարողանալու:

—Տղերք, ասաց նա, ով կարող է թող դուրս թռչի քարայրից, մտցնի լեռն ի վեր և այնտեղ տափարակի վրա կը մրանանք, եթէ կարելի է, եթէ ոչ, ժամանակ է որ ամեն մարդ իր կեանքի վրա մտածի:

Երիտասարդները դադարեցին կրակելուց և նայեցին Պետրոսին:

—Այո, կրկնեց նա—իզուր է. տեղներս շատ նեղ է և կռիւը անհաւասար. միակ փրկութիւնն է բարձրանալ տափարակի վրա և աղատվել

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐ

V*)

—Ի՞նչ էք կարծում, ասաց Կարօն քիչ լռութիւնից յետոյ—ցածից արձակված գնդակները չեն կարող մեզ վնասել:

—Չեմ կարծում, եթէ ներսը մնանք միշտ, պատասխանեց նրան երիտասարդներից մէկը:

—Մտածում են, յայտնեց չորրորդ երիտասարդը, որ աւելի դէպի դուռն էր գտնվում—նայեցէք... որքան շատ են:

Բոլորը դարձան դէպի դաշտը: Խումբը մօտենում էր, նրանց նիզակները կապոյտ փօնի վրա երերում էին, իսկ վահանի զամերն ու հրացանների փողերը փայլում լուսնի աղօտ լոյսի տակ: Բազմաթիւ էին, մօտ 50 հոգի, ձիաւոր և շատ լաւ զինված:

—Պատրաստվենք, տղերք, գոչեց Պետրոսը—Ս. Կարապետ մըզի քօմագ... հրացաններիդ մի աչք խփէք. ետ քաշվենք մի քիչ և թողէք ինձ դիտելու թշնամու քայլերը:

Միւս վեց երիտասարդները ներս քաշվեցին. Պետրոսը փորսոց տալով մօտեցաւ տափարակի ծայրին, աշխատեց քարայրի ճգած ստուերի մէջ մնալ և սկսեց դիտել:

Քիւրդերը առաջացան բաւական տեղ, կանգ առին, խմբվեցին և շրջապատեցին իրանց մեծաւորին: Մի րոպէ յետոյ նրանք նորից բաժանվեցին և աւելի կամաց քայլերով՝ գնացին դէպի քարայրները: Մէկ մէկ համրվում էին նրանք: Բոլորն էլ Համիդիէի նշաններ ունէին, թէև այլանդակ քիւրդախառն հագուստի վրա:

Երբ լիովին մօտ գնացին այնտեղին, որտեղից սկսվում էր քարայրները տանող ժայռոտ ատորոտը, քիւրդերից շատերը ձիուց իջան և հրացանները լարեցին:

—Պատրաստ կացէք, ասաց Պետրոսը դէպի ներս դառնալով—սկսում են յարձակումը, սողոսկելով մօտեցէք ինձ և երկու հոգի ձեղնից աջ, իսկ երկուսը ձախ հակեցէք՝ գնդակահար անելու մարդկանցներին:

Այդ միջոցին ճայթեց մի ճայն, արձագանքը թնդացրեց հովիտը և գնդակը գնաց թռցնելու մի քանի ժայռի կտորներ, քարայրներից երկրորդի գլխի վերևում:

Այդ ճայնը դողացրեց պաշարվածներին. մարթինի զօրեղ հրացանի ճայն էր:

Նաղենիկը քաշվել էր բոլորովին խորքը և կծկվել մի խոր անկիւնում:

—Կրակ չանէք, տղերք, հրամայեց Պետրոսը—սպասեցէք իմ ասելուն:

Առաջին հարուածից յետոյ, քիւրդերը լռեցին: Խոր լռութիւն տիրեց երկու կողմում էլ: Էլի հաւաքվեցին աղայի շուրջը, էլի մէկը նշան դրեց առաջին քարայրը և մի գնդակ ուղղեց նրա ներսը:

Գնդակը գնաց, ներս մտաւ, բայց առաստաղից ցած չիջաւ և այնտեղից դեռևս թափեց հողի կտորներ: Նաղենիկը սարսափահար ճիչ արձակեց: Նա գունաթափվել էր և դողում էր:

—Ոչինչ, դարձաւ նրան Պետրոսը—քաջ եղիր և մի վախենայ, գնդակը քեզ չի հասնի:

Երկու գնդակից յետոյ քիւրդերը երրորդ անգամ հաւաքվեցին. այս անգամ խորհրդակցութիւնը մօտ 5 րոպէ տևեց, որից յետոյ նրանք միմեանցից բաժանվեցին և մօտ 20—30 հոգի, զանազան ուղղութեամբ, ոտաւոր և հրացանները ձեռքերնին, սկսեցին քարերի միջից դէպի վեր քարայրները բարձրանալ:

—Գալիս են, ասաց Պետրոսը, աչքներդ չորս բաց արէք:

Քրդերը մտել էին քարերի մէջ, ծածկվում էին նրանց ետևում, տափականում, սողոսկում էին՝ աշխատելով օգտվել իւրաքանչիւր թուփից կամ բարձրութիւնից ու քարից, նրա ետևը թագնվելու համար:

Պետրոսը գունաթափ նայում էր և հազիւ ուրեմն կարողանում էր նշմարել եկողներից մէկի մէջքը կամ գլխի մի մասը:

—Պէտք է կրակել, ասաց նա. տղերք, հէնց որ մի ծայր տեսնէք, կրակ..

Անցաւ մի լուռ րոպէ, յետոյ Կարօն շարժվեց, լարեց հրացանը. թռաւ գնդակը, լսվեց մի աղաղակ և քարերի միջից գլորվեց դէպի ցած մի քիւրդի մարմին:

Այդ առաջին հարուածը հրաւիրեց իր վրա դաշտում կանգնած քիւրդերից գնդակների կարկուտ և մի քանի րոպէ վերից ու ներքևից փոխադարձաբար միմեանց վրա էին սուլում գնդակներ, լսվում էին ճիչեր, գլորվում մարմիններ:

—Տղերք, իզուր գնդակ չը մսխէք, գոռում էր Կարօն րոպէ առ րոպէ արձակելով իր հրացանը:

Բայց նրանք ստիպված էին այժմ մի փոքր երեցնել իրանց գլուխները՝ կռացնելու համար

„Кавказъ“-ը առաջ է բերում մեր երկրի ժողովրդի մասին, այսինքն նա համարում էր ռուս ժողովուրդը այնքան անզարգացած և չը հասունացած իրաւագիտական և բարոյական տեսակէտից, որ երդուեալ դատաւորի ֆունկցիան նրան յանձնելուց միայն չարիք էր սպասում:

„Թոյլ տալ, ասում էր նա, որ այդ տեսակ հասկացողութեան տէր մարդիկ վրձռեն կարևոր, երբեմն խիստ դժուար հարցեր մեղաւորութեան և անմեղութեան մասին, մի բան, որ պահանջում է նուրբ վերլուծութիւն և լոգիկական եզրակացութիւններ անելու ընդունակութիւն, — այդ կը նշանակի ուղղակի նպաստել անիրաւութեան զարգացման“:

Կոմս Բլիւդովի այդ ըստ երևոյթին զօրեղ պատճառաբանութեան դէմ հանդէս դուրս եկաւ սենատոր Բօվինսկին, որ իր պերճախօս հերքումով և անհերքելի փաստերով ջրեց նրա կարծիքը և այն միտքը արտայայտեց, թէ ժողովրդի զարգացումը և հասունութիւնը կամ անհասունութիւնը պէտք է փորձել նոյն իսկ գործի մէջ:

Եւ Բօվինսկու կարծիքը յաղթող հանդիսացաւ: Ռուսաստանը ստացաւ երդուեալ դատաւորների ինստիտուտը:

Եւ ինչ դուրս եկաւ:

„Ռուս ժողովուրդը, ասում է իրաւաբան Զանշիէվը, երդուեալ դատաստանի ասպարէզի մէջ մտնելու առաջին օրից ամենափայլուն կերպով հերքեց ժողովրդին անծանօթ կասկածաւոր բիւրօկրատի (կոմս Բլիւդովի) կարծիքները: Դրան ապացոյց այն փաստը, որ արդարադատութեան մինիստրը Թագաւոր Կայսրին ներկայացրած նոյն իսկ առաջին զեկուցագրի մէջ առանձին գովասանքով է խօսում գիւղացի երդուեալների մասին, որոնք շատ աջող կերպով վճռում էին այնպիսի հարցեր, որ մինչև անգամ իրաւաբանները դժուարանում էին լուծել:“

Եթէ 30 տարի առաջ, դեռ ճորտութիւնից նոր դուրս եկած, դեռ դատաստանական բէֆօրմների համը չը ճաշակած ռուս գիւղացին ընդունակ հանդիսացաւ ըմբռնել երդուեալ դատարանի, ներքին համոզմունքի և խղճմտանքի վրա հիմնված դատաստանի միտքը, միթէ այժմ, 30 տարի անցնելուց յետոյ, մեր երկրի ժողովուրդը, (մեր խօսքը հայերի, վրացիների և թուրքերի մասին է), որ ունի ահագին կուլտուրական անցեալ, դարևոր աւանդութիւններ, որ նոյն իսկ պարսիկ տիրապետութեան ժամանակ դատվել է ընտրողական դատաւորների ձեռքով, որ ամբողջ 27 տարի վարժվել, զտվել է դատաստանական բէֆօրմների քուրայի մէջ, միթէ այդ տեսակ մի ժողովրդի մասին այսօր կարելի է ասել, թէ նա անընդունակ կը լինի ըմբռնել, իւրացնել երդուեալ դատարանի միտքը: Չէ որ այդ դատարանը միայն լրացուցիչ մասն է կազմում դատաստանական բէֆօրմի:

Ուրեմն ինչ փաստերի հիման վրա է „Кавказъ“ լրագիրը պնդում, որ մեր երկիրը 27 տարվայ ընթացքում ոչ մի փոփոխութիւն չէ կրել, որ նրա կուլտուրական վիճակը, իրաւագիտական և բարոյական աշխարհայեցողութիւնը դեռ նոյն կէտի վրա է կանգնած, ինչ որ 27 տարի առաջ: Անհերքելի իրողութիւն է, որ մեր երկրի ազգաբնակութիւնը այս վերջին 30 տարվայ ընթացքում զգալի առաջադիմութիւն է գործել մտաւոր և բարոյական ասպարիզում, և նոյն իսկ ինքն „Кавказъ“ լրագիրը, ինչպէս շատ իրաւացի կերպով նկատում է „Новое Обозрѣніе“, շատ անգամ հաստատել է այդ փաստը իր էջերում:

Եւ այլապէս էլ չէր կարող լինել, քանի որ այդ ժամանակամիջոցում երկրի վարչական կեանքը կանոնաւորվել է, հաստատվել են բազմաթիւ կրթական հաստատութիւններ, հեշտացրվել են հաղորդակցութեան միջոցները, հրատարակվել են բազմաթիւ լրագիրներ, գրքեր և այդ բոլորի շնորհով երկրի նախնական պայմանները մեծ յեղափոխութեան են ենթարկվել:

Շեշտում ենք ուրեմն, որ եթէ 30 տարի առաջ ռուս ժողովուրդը ընդունակ եղաւ ըմբռնել երդուեալ դատաւորների միտքը և վայելել նրա բարիքները, այսօր, 30 տարուց յետոյ, կովկասի ժողովուրդը, ունենալով կուլտուրական անցեալ, զգալի առաջադիմութիւն գործած լինելով մտաւոր և բարոյական ասպարիզում, ամբողջ 30 տարի վայելած լինելով նոր դատարանների բարիքները, կարող է շատ մեծ դիւրութեամբ ըմբռնել նոյն միտքը և վայելել նոյն բարիքները:

Ընդունելով այդ հիմնական կէտերը, որոնց դէմ ոչինչ չէ կարող ասել նոյն իսկ „Кавказъ“ լրագիրը, մենք միւս անգամ կանգ կառնենք այն մասնաւոր կէտերի վրա, որոնք, լրագրի կարծիքով, գործնականապէս արգելք են հանդիսանում երդուեալ դատարանների հաստատութեան մեր երկրում:

ՄԱՄՈՒԼԻ ԿԱՐԾԻՔԸ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Պարիզի „Figaro“ լրագրի մէջ կարդում ենք. „Պարիզի հայերից մի պատգամաւորութիւն, օգտվելով Գլադստօնի այստեղից անցնելուց, երէկ ներկայացաւ նրան՝ ողջունելու համար: Պատգամաւորութիւնը նրան ներկայացրեց մի շնորհակալութեան ուղերձ այն մասնակցութեան համար, որ Գլադստօն ցոյց է տալիս հայկական խնդրում, և մասնաւորապէս այն դեղեցիկ ճառի համար, որ նա արտասանեց Հօվարդէնում, հալածված հայերի օգտին: Գլադստօն, ոգևորված այդ դէպքից, մի քանի խօսքով պատասխանեց պատգամաւորութեանը և հաւատացրեց, որ կարելի է լիովին վստահ լինել, որ Անգլիան կաշխատի մի օրինաւոր և արդարացի վճիռ տալ հայոց հարցին: Պատգամաւորները մի և նոյն ժամանակ մի դեղեցիկ փունջ տուեցին տիկին Գլադստօնին“:

Վիէնն այից հաղորդում են. „Մի գերմանացի սպայ, որ նորերում վերադարձել է Կ. Պոլիս, ասում է, թէ սուլթանը աւելի քան երբ և իցէ վախենում է յեղափոխութիւնից մայրաքաղաքում. այդ պատճառով նա չէ ուզում թոյլ տալ զօրքերին նոր վարժութիւններ և չէ թոյլ տալիս Մօզերի նոր տեսակի զէնքերը բաժանել զօրքին:

ՀԵՌԱԳԻՐ ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

Կ. Պոլիս, 13 յունվարի: Հայոց հարցի առիթով կազմված քննիչ յանձնաժողովը երկուշաբթի հասաւ Մուշ:

Անգլիական փոխ-հիւպատոսը Սօֆիայում, Գէմսօն, որը ծառայում էր Լրդրումում, ուղարկվում է այնտեղ՝ հայկական յանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու համար:

Լօնդոնից «Нов. Время» լրագրին հաղորդում են, որ թիւրքաց աղբիւրներից ստացված տեղեկութիւնների համեմատ, Կ. Պոլսի բրիտանական դեսպանութեան պօստատարի մօտ բռնված պօստային պայուսակում գտնվեցին նամակներ, որոնք ապացուցանում են, որ հայասէր ագիտատորները Անգլիայում յարաբերութեան մէջ են հայ հեղափոխականների և «Երիտասարդ Թիւրքիայի» ընկերութեան անդամների հետ:

Պնդելով այն որոշման վրա, թէ պէտք է արգելել անգլիացիներին խառվութիւն զցել թիւրքաց հպատակների մէջ, սուլթանը մերժեց և թոյլ չը տուեց «Times» լրագրի թղթակցին գնալ հայերով բնակեցրած տեղերը: «Times» լրագիրը յայտարարում է, որ գործողութեան մի այդպիսի եղանակը յետ կը մղէ սուլթանից նրա վերջին բարեկամներին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ ԳՈՒՄԱՐՎԱԾ ԺՈՂՈՎԸ

Այս րոպէիս Պետերբուրգում տեղի ունի պաշտօնական մի ժողով, որ զբաղված է կարևոր ընթացիկ գիւղատնտեսական խնդիրների քննութեամբ: Ժողովին մասնակցում են զանազան մինիստրութիւնների ներկայացուցիչներ և Ռուսաստանի զանազան կողմերից հրաւիրված հմուտ անձեր: Ժողովի կազմողը և ղեկավարողը երկրագործութեան մինիստրութիւնն է:

Ներկայ ժողովի, կամ ինչպէս պաշտօնապէս կոչվում է, գիւղատնտեսական խորհրդի պարապմունքի առարկաներն են:

1) Նահանգական և գաւառական գիւղատնտեսական ժողովներ կազմելու ծրագրի քննութիւնը:

2) Կազմել մի ընդհանուր կանոնադրութիւն, որով կարելի լինի զանազան տեղերում բանալ գիւղատնտեսական ընկերութիւններ, առանց երկար ու բարակ բաղադրեալ դիմումների:

3) Կազմել մի կանոնադրութիւն գիւղատնտեսական ընկերութիւններ կազմելու համար, օրինակ գինեգործների և առհասարակ գիւղատնտեսական գործով պարապողների մէջ:

4) Քննել այն միջոցները, որոնցով մինիստրութիւնը կարող է նպաստել զեմստվոների գիւղատնտեսական գործունէութեան:

5) Քննել այն միջոցները, որոնք կարող են նպաստել գիւղատնտեսական կրթութեան, բացի դպրոցների միջոցով գործելուց:

6) Որչափ ցանկալի է և ինչպէս պէտք է իրագործել գիւղատնտեսական ընկերութիւնների մասնակցութիւնը այն դպրոցների գործերի մէջ, որոնք սովորեցնում են գիւղատնտեսական գիտութիւններ:

7) Ինչ միջոցներով կարելի է տարածել տնային անասունների կատարելագործված տեսակները:

8) Ինչպէս պէտք է տարածել նոր մշակութիւնները, նոր բոյսերը երկրի զանազան մասերում:

9) Ինչպէս պէտք է դիւրացնել երկրագործական մեքենաների մուտքը գիւղերը, գիւղացիների տնտեսութեան մէջ:

10) Քննել այն խնդիրը, թէ ինչպէս կարող է մինիստրութիւնը նպաստել, որ զանազան կալուածքներում հիմնվեն փորձնական, օրինակելի ագարակներ:

11) Ինչ փոփոխութիւններ պէտք է մտցնել անտառապահական օրէնքի մէջ, որպէս զի անտառները չը կարատվեն զուր տեղը ի վնաս երկրի շահերի, և մի և նոյն ժամանակը ծայրահեղ խստութիւններից չը վնասվի ժողովուրդը:

12) Որոնել միջոցներ, որ աւաղոտ տարածութիւնները վերափոխվեն արդիւնաւէտ տեղերի:

13) Քննել թէ որչափ կարելի է տարածել ամենուրեք բոյսերի ապահովացումը կարկտահարութիւնից:

պահվելով կամ փախչելով, բայց շուտ անենք, գալիս են: Գնանք, Նազենիկ:

Ամեն ոք չտապեց դէպի դուրս: Պետրոսը Նազենիկին դէպի ձախ տարաւ և մոտն ժայռերի մէջ, որոնք այդ կողմում թափվել էին միմեանց վրա կոտոր կոտոր, շատ տեղ սանդուխներ էին կազմել, կամարներ, պատանդաններ և շատ տեղ էլ քարի հեղեղաններ:

Այդպիսով դիւրանում էր վերելքը, մանաւանդ որ դժուար տեղերում Պետրոսը սահում էր դէպի վեր, յետոյ ծնկան վրա գալիս և վեր էր քաշում Նազենիկին: Ժայռի կտորներ էին պոկոտվում և շառաչիւնով գլորվում ցած նրանց ետևից, բայց այդ բոլորը անլսելի էին, որովհետև դաշտի վրա կանգնած քիւրդերը դեռ գնդակներ էին տեղում քարայրների վրա:

Այդ նշան էր, որ մագլցող քիւրդերը դեռ քարայր չէին հասել:

Երբ հասան վերև և այդտեղ Պետրոսը կանգ առած թողեց Նազենիկին քիչ շունչ առնելու, ցածում հրացանի ձայները դադարեցին. յետոյ անցան մի քանի լուռ րոպէներ: Պետրոսի միւս ընկերները չէին երևում, ով գիտէ որ կողմից էին փախել կամ ուր թաղնվել:

Պահ մի խոր լռութիւնից յետոյ, յանկարծ լսվեցին մի քանի թոյլ հրացանաձգութիւններ, ապա երկու վայրենի աղաղակներ և այդ բոլորը ապացուցանում էին, որ քիւրդերը դրաւել էին քարայրները, ատուգել՝ որ ոսերը թռել են:

Ուրեմն հետապնդելու էին. ձիով անկարելի էր, հարկաւոր էր մի քանի ժամ, որ կարողանային ձորի կողմից այդ տափարակին հասնեն. քիւրդերը անշուշտ կը հետապնդէին ոտքով:

Այդպէս էլ մտածում էր Պետրոսը, ուրեմն դեռ ապահով չէին, հարկաւոր էր քայլել, գտնել մի ուրիշ ապաստանարան և կամ մի կերպով կորցնել տալ իրանց հետքը:

Ցուրտ էր: Երկինքը ամպոտել էր սկսում. արևելքից մի մեծ ամպ փշրվել էր և ցանցառացած բրդի նման՝ տարածվում սփռվում էր լուսնի երեսին, յետոյ կուտակվում էր ետևից հասած ուրիշ ամպերով և գիշերը մթնացնում:

Երկու երիտասարդները քայլում էին արագութեամբ, իջնում էին և ոչինչ նրանց չէր երևում, եթէ ոչ միմիայն բարձր լեռների ձիւնալից գագաթները. ոչ դաշտն էր տեսանելի և ոչ էլ ձորերը:

Կոխոտում էին նրանք տաքութիւնից փափկացած, բայց այժմ էլ ցրտից կիսովին սառած ձիւնը և ի մեծ ցաւ Պետրոսի, նշմարելի ոտքի հետքեր էին թողնում: Ձիւն գալուց ի վեր այդ կողմերում ոչ մի մարդկային ոտք չէր կոխել. ձիւնը սպիտակ անբիծ սաւանի նման ծածկում էր մի ահագին տարածութիւն. հեռուի սև ժայռի խոշոր կտորներն էին միայն, որ բծաւորում էին և իրը եզր կազմում սպիտակ սաւանին:

Պետրոսն ու Նազենիկը դէպի այդ ժայռերի կտորներն էին յառաջանում, կտորներ, որոնք այնտեղ ցրված կային ով գիտէ մնացորդ որպիսի լեռից:

Ձիւնը խշրտում էր: Ամայի էր ամեն կողմ. ոչ մի ձայն. գիշերային թռչուններն իսկ ձայն չէին հանում:

Ցաճախ Պետրոսը ետ էր նայում սրտատրոփ և սպասում մէջքի կողմից եկող գնդակների, բայց երկինքը մթնանում էր և հեռաւորութիւնը անչափելի դարձնում: Այդ հանգամանքը սկսեց նրան քիչ մխիթարել՝ դուցէ իրանք կարողանային անտեսանելի մնալ, հասնել մի գիւղ, մի տեղ թաղնվել... կամ ով գիտէ, ով կարող էր ասել ինչ կը լինէր:

Այդպէս էր նա մխիթարվում, երբ մէկէն ի մէկ օդի մէջ սուլեց մի գնդակ և ճիչդ նրանց գլխի վրայից անցնելով՝ գնաց անհետացաւ տարածութեան մէջ:

—Տեսնվում ենք, դոչեց յուսահատութեամբ Պետրոսը առաջին տպաւորութեան տակ,—տեսնվում ենք, ուրեմն շատ մօտ են:

Կանգ առաւ և ետ նայեց. հեռուից սև բաներ շատ էին երևում, բայց մթութիւնը ծածկում էր ամեն ինչ և նա, որ քիչ առաջ օրհնում էր խաւարը, այժմ անէծք էր կարդում նրա դէմ, որ չէ կարողանում տեսնել, թէ որպիսի հեռաւորութեան վրա են հետապնդողները և կամ քանի հոգի:

Կանգ չառին. էլի քայլել սկսեցին: Մի քանի րոպէ քայլելուց յետոյ, մէկէն ի մէկ Պետրոսը ժպտաց և ասաց.

—Ա՛, հիմա իմացայ:

Իմացել էր. քիւրդերը հրացան էին արձակել նայելով հետքերի ուղղութեան, մանաւանդ որ Պետրոսը միշտ ուղիղ գծով էր քայլել:

—Հետևիր ինձ, ասաց նա Նազենիկին, ապա փոխեց ուղղութիւնը քիչ դէպի աջ և սկսեց գնալ դէպի ժայռի կտորները այս անգամ ծուռ գծով:

Պարզ էր սակայն, որ իրանց ետևից գալիս էին. դա անհանգիստ արեց Պետրոսին. եթէ ինքը մենակ լինէր, շատ հեշտութեամբ կարող էր արագացնել քայլերը և անշուշտ կազատվէր, իսկ այժմ իր հետ մի կին կար, որ հետզհետէ թուլանում էր, յոգնում և չէր կարողանում ոչ միայն արագ քայլել, այլ նոյն իսկ առաջ գնալ:

—Քայլիր, դոչում էր նա յուսահատութեամբ, բռնած Նազենիկի թևից և գրեթէ կոպտութեամբ, —քիւրդերը հասնում են:

Խեղճ աղջիկը ճիգ էր գործում, սեղմում էր ատամները, աշխատում էր քայլել, բայց ոտները ծանրանում էին, նա կայթում էր, շնչասպառ լինում, նրա պարեգօտը փաթաթվում էր ծնկներին... աչքերը արտասուքով լցվել, մարմինը քրտնաթոր...

Քայլեց, քարշ եկաւ, թափեց ինչ որ ոյժ ունէր, բայց վերջապէս կանգ առաւ շնչասպառ և հազիւ կարողացաւ թոթովել.

—Էլ չեմ կարող. թող ինձ այստեղ:

—Քիւրդերին թողնեմ, բացականչեց Պետրոսը ձեռքերը սեղմելով:

—Սպանիր ուրեմն, նստեց Նազենիկը—էլ չեմ կարող, էլ ոյժ չը կայ:

Այն ժամանակ Պետրոսը ուսին ձգեց հրացանը, յետոյ եկաւ նստեց Նազենիկի առջև, ետևը նրան դարձրած և ասաց վճռողաբար.

—Շուտ, մէջքիս վրա ելիր... տուր ձեռքերդ, լաւ, հանգիստ կաց...

Արագութեամբ շալակեց աղջկան, բարձրացաւ, և սկսեց քայլել:

(Կը շարունակվի)

Այս կարևոր խնդիրների քննությունը պահանջում է մեծ գիտություն, փորձառություն և հմտություն։ Մինիստրությունը ինքը արդեն պատրաստել է բաւականաչափ նախապատրաստական նիւթեր, այժմ կը լսի և խորհրդի կարծիքները և նը-կատողությունները և ապա իր վերջնական եզրակացությունների հետ կը ներկայացնի պետական խորհրդին ի հաստատություն։

Երկրագործության մինիստրը, ամսիս 7-ին բանալով գիւղատնտեսական խորհրդի նիստը, մի ընդհանուր տեսություն անելով Ռուսաստանի տընտեսական ներկայ վիճակի վրա, ասաց, որ պէտք է ձգտի գիւղատնտեսության ներկայ խախուտ և երերուն դրությունը փոխել աւելի հաստատ, արդիւնաւէտ վիճակի և չեշտեց, որ ինքն մեծ յոյս ունի, որ հասարակության ներկայացուցիչների մասնակցությունը կօգնի նրան դիւրացնելու այն լուրջ գործը, որ դրված է ներկայ սերնդի առաջ։

Սենատոր Կալաչովը, պատասխանելով մինիստրին, մեծ ուրախություն յայտնեց այն հաւատի համար, որ ունի կառավարությունը դէպի հասարակության ներկայացուցիչները և յոյս յայտնեց, որ այդ հաւատը կարդարանայ գործնականապէս։

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

Տաղանդաւոր Պարոնեանի «Բաղդասար աղբար» կոմեդիան, որ հայոց դերասանները և սիրողները ներկայացրին յունվարի 12-ին Բանկի թատրոնում, անկասկած, մի քանի տարի մեր թատրոնական բէպերտուարի մէջ՝ ամենասիրելի պիէսաներից մէկը կը լինի։ Այդ համոզմամբ մենք դուրս եկանք թատրոնից։

Շնորհակալ պէտք է լինել պարոններ՝ Սարդարեանից և Վրոյրից, որ այդ սրամիտ գրուածքը յարմարեցրին մեր բեմին։ Միայն մի նկատողություն։ Պիէսայի առաջին գործողության վերջը, որտեղ խօսակցությունները շատ ձգձգվում են, և երրորդ գործողությունը, որը առհասարակ անմշակ է, պէտք է նորից մշակել, լրացնել, կոկել։ Այն ժամանակ տպաւորությունը անհամեմատ ուժեղ կը լինի։

Անկասկած, «Բաղդասար աղբարը» յաջորդաբար զարգացող, հոգեբանական նրբությունների վրա հիմնված մի պիէսա չէ, և այդպէս մենք չէինք էլ սպասում,—այլ զեղեցիկ պատկերների մի ժողովածու, պատկերներ, որ տաղանդաւոր երգիծաբանը նկարել է ամենայն ճշգրտությամբ, համեմելով նրանց իրան յատուկ իւմորով և աննման սրամտություններով։ Պիէսայի գլխաւոր հերոսը՝ Բաղդասար աղբարը՝ պոլսեցի տխմարներից մէկն է, որ շատ մեծ կարծիք ունի իր խելքի, շնորհի և ընդունակությունների մասին։ Նա ամուսնացել է մի ջահիլ, վառվռուն աղջկայ հետ, որ դաւաճանելով իր անճոռնի մարդուն, պահում է մի սիրական, ի դէմս զեղեցկատեսիլ և երիտասարդ Ռուբէնի։ Իմանալով այդ սոսկալի գաղտնիքը, Բաղդասար-աղբարը վճռում է դուրս անել տանից անառակ կնոջ,—և ահա այդ միջոցին երևան է գալիս Պոլսի հռչակաւոր, տգէտ, շատախօս հայ-ազգօկատի տիպը, Օգսէն էֆէնդին, որ խեղճ ծերունուն բոլորովին գլխից հանում է, կլանում նրա ոսկիները և համոզում խաբված ամուսնուն, թէ անպատճառ ինքը ապահարզան ձեռք կը բերէ նրա համար։ Այդ բօպէից հանդէս են գալիս Կ. Պոլսի ազգային պատրիարքարանի դատաստանական յանձնախմբի երեք անդամները, որոնց տիպը Պարոնեան նկարել է մեծ տաղանդով։ Ահա այդ անձնաւորությունների շուրջն էլ պատում է ամբողջ գործողությունը։

Պէտք է խոստովանենք, որ Բաղդասար աղբարի դժուար դերում Վրոյրը ինքն իրան գերազանցեց։ Նրա խաղը վերին աստիճանի մտածած, խելացի էր, ազատ որ և է ծայրայեղություններից։ Նա, ինչպէս երևում է, մօտիկ և շատ լաւ գիտէ Պոլսի կեանքը և այդ պատճառով իր խաղով մի անսահման զուարճություն պատճառեց հասարակության։

Տարաբաղդաբար, նոյնը չենք կարող ասել Օգսէն էֆէնդու՝ Սարդարեանի մասին։ Պ. Սարդարեան մի նպատակ միայն ունէր.—ծիծաղեցնել հասարակությունը։ Ճշմարիտ է, նա իր նպատակին հասաւ, բայց այդ նպատակին հասնելու համար նա այնպիսի չափազանցությունների էր դիմում, որին երբէք չը պէտք է դիմի մի լուրջ դերասան։

Հռչակաւոր փաստաբանի դերը այդ դերասանի ոյժից վեր չէ, և նա, անկասկած, մեծ աջողություն կունենայ, եթէ ծայրայեղություններ չանի։

Տիկին Մելիքեան՝ Անոյշի դերում թոյլ էր. ի միջի այլոց նրան խանգարում էր Պոլսի բարբառը, որին դերասանուհին բոլորովին ծանօթ չէ։ Իսկ օր. Վարդուհին աղախնի դերը կատարեց շատ համով։

Դատաստանական խորհրդի անդամները՝ պ. պ. Ցարությունեան, Մատինեան և Հասան-Զալալեան վատ չէին։ Վերջինը իր թէև փոքրիկ, բայց տիպական դերը լաւ էր ըմբռնել։ Սիրողներից մէկը՝ պ. Միքայէլեան, սիրահարի դերում՝ թոյլ էր։

Թատրոնը կատարեալ էլի էր։

*

ՆԱՄԱԿ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

—

Դեկտեմբերի 21-ին

Հայ հասարակության մէջ շատերին յայտնի է, որ Պետերբուրգի եկեղեցին ամեն տարի իր գումարներից մի որոշ մաս՝ մօտաւորապէս 3000 ռուբլի, յատկացնում է այստեղի չքաւոր ուսանողներին ամսաթոշակ տալու։ Եթէ ի նկատի ունենանք հայ ուսանողության և մասնաւորապէս Պետերբուրգի հայ ուսանողների այն ստուար մեծամասնությունը, որ 20—25—30 ռուբլի ամսականներով հաղիւ հազ քարշ են տալիս իրանց ուսանողական տարիները, զրկված կանոնաւոր, առողջապահական ապրուստից, շատ անգամ ցամաք հացով կերակրվելով և երկու երեք օրը մէկ անգամ ճաշելով, այն ժամանակ ինքն ըստ ինքեան պարզվում է, թէ որքան նպատակայարմար և շնորհակալության արժանի մի ձեռնարկություն է Պետերբուրգի եկեղեցու կատարած գործը։

Բայց գործի հէնց այդ վերին աստիճանի կարևոր և նպատակայարմար լինելը մեզ իրաւունք է տալիս պահանջելու, որ սովորական զանցառությունները, զանազան խնամությունները տեղի չունենային այդ գործում և բարեխղճությունը գլխաւոր դերը խաղար ստիպենդիաները բաժանելու միջոցին, որպէս զի նիւթական նպաստ ստանայ միայն նրանք, որոնք իսկապէս չքաւոր են։

Մօտենում է յունվարը, երբ պէտք է որոշվեն առաջիկայ տարվայ ստիպենդիատները, հետևապէս այժմ աւելի քան երբէք անհրաժեշտ է մի երկու խօսք ասել այդ խնդրի մասին. ուրեմն թող թոյլ տրվի մեզ կատարել այդ պարտականությունը, միայն նախապէս ցանկալի էր, որ դա չը մնար «Զայն բարբառոյ յանապատի», այլ ուշադրության առնվէր գլխաւորապէս եկեղեցական խորհրդի և Պետերբուրգի հայ հասարակության կողմից։

Ահա միակ ձեռք առնված միջոցը, որով այսքան տարիներ բաժանվել են ստիպենդիաները։—Ժամանակը գալուց՝ ցանկացող ուսանողները խընդիր են տալիս եկեղեցական խորհրդին, ցանկությունն յայտնելով ստիպենդիա ստանալու. խորհուրդը գրում է դրանց անունները մի թերթի վրա և այդ թերթի օրինակները բաժանում է ուսանողների մէջ։ Բաւական է մի ստիպենդիա ցանկացողի անուան դիմաց հինգ ուսանողի ստորագրություն և նա իրաւունք ունի ստանալու։ Ի՞նչ անմեղ միջոց. կարծէք օձը դեռ չէ խաբել Եւային։ Հինգ չէ, տասնհինգ ստորագրություն կարող է գտնել ամեն մի ստիպենդիա ցանկացողը. փառք Աստուծոյ, «խաթրը» հօ մեր աւանդական յատկություններից մէկն է. մեր հասարակական որ քայլի մէջ «խաթրը» գործ չէ տեսնում։ Այնուհետև խորհրդին մնում է որոշել ամսական որքան պէտք է ստանայ այս կամ այն ուսանողը, իսկ որոշել ինչ հիմունքներով, այդ էլ Աստուած գիտէ։

Ակնյայտ լինելու չափ պարզ է, որ դա մի շատ անկատար միջոց է և ղեկավարվել դրանով, կը նշանակէ ոչ մի միջոցով չը ղեկավարվել։ Գուցէ կարծեն թէ այդ բանը առաջ է եկել դէպի ուսանողները տածած անկեղծ հաւատից։ Երբէք չը կարծէք. դա ոչ այլ ինչ է, եթէ ոչ թուլություն, հարկաւոր ուշադրության բացակայություն։

Հարկաւոր է առնել այդ չարիքի առաջը և ահա թէ ինչպէս. քանի որ մի անգամ եկեղեցական խորհուրդը ընդունել է ուսանողների մասնակցությունը այդ գործում, ուրեմն անհամեմատ աւելի նպատակայարմար կը լինի, փոխանակ այդ գործին ոչնչով չօգնող թերթերը, առաջարկել ուսանողներին ընտրել իրանց միջից մի մասնաժողով, և այնուհետև դրա հետ գործ տեսնել։ Այդ մասնաժողովը, իբրև մեծամասնությունից ընտրված, անկասկած անհամեմատ աւելի վստահելի է, քան թէ մասնաւոր ուսանողները։ Խորհրդի անդամները շատ քիչ բան գիտեն, կամ համարեա ոչինչ չը գիտեն ուսանողների նիւթական դրությանն մասին և անձեռնհաս են հարկաւոր տեղեկությունները ժողովելու։ Բաւական չէ միայն գիտենալ, թէ այս ինչ ուսանողը չքաւոր է, այլ պէտք է իմանալ այն էլ, թէ չը կայ արդեօք դրանից աւելի չքաւորը և կարիք ունեցողը։

Ուսանողներից կազմված մասնաժողովը ճանաչում է իր միջի մարդկանց, կամ նոյն իսկ, եթէ չէ ճանաչում, կարող է նրա մասին տեղեկություններ ժողովել անհամեմատ աւելի աջողությամբ։ Եկեղեցական խորհրդին մնում է նախապէս տալ այդ մասնաժողովին ստիպենդիա ցանկացողների անունները, իսկ մասնաժողովը իր հաւաքած տեղեկությունների համաձայն կորոշէ, թէ դրանցից որոնք իսկապէս կարիք ունեն և ով աւելի խիստ կարիք ունի և դրա համաձայն էլ կորոշէ ամսաթոշակների քանակությունը։ Ահա մի միջոց, որ մի անգամ ընդ միշտ կապահովէր գործի աջողությունը և կը հասցնէր ցանկալի նպատակին։

Դա մի մասնաւոր կարծիք չէ, այլ ուսանողներից շատերի կարծիքը. և եկեղեցական խորհուրդը եթէ ցանկանում է իսկապէս օգնած լինել ուսանողներին, պէտք է կամ այդ միջոցը իրագործէ, կամ աւելի լաւը ձեռք առնէ։ Եթէ ոչ, մի մեղադրեցէք ուսանողներին, քանի որ ինքներդ էք չարիքի պատճառը. փաստեր էք ցանկանում, հարցրէք ուսանողներից, նրանք կը տան ձեզ մի երկար ցուցակ անբարեխղճությունների թէ ստիպենդիա տուողների և թէ ստացողների կողմից։

Անհամեմատ աւելի հեշտ է խօսել ուսանողների վրա տեղի անտեղի, քան նրանց օգտին մի գործ կատարել. եկեղեցական խորհրդի իրաւարան անդամը փոխանակ աջ ու ձախ խօսելու ուսանողների վրա, «աղայություններ ծախելու», և հայ ուսանողության փրկությունը Գերմանիայում գտնելու, աւելի մեծ գործ կատարած կը լինէր, որ ուշադրություն դարձնէր այդ խնդրի վրա։ Հայ ուսանողները Ռուսաստանում էլ կարող են ստանալ իրանց ուսումը և եթէ կուզէք նոյն իսկ աւելի նպատակայարմար, աւելի ցանկալի ուսումը, իսկ դուք փոխանակ տեղի անտեղի ձեր տաք տեղից խօսելու, աւելի լաւ կը լինէր աշխատէիք այդ չարիքի առաջը առնել։ Բաւական չէ միայն խօսել և այլանդակ կարծիքներ յայտնել ուսանողների մասին։

Յովհ. Մեղն.

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ

—

Դեկտեմբերի 30-ին

Ամսիս 28-ին վախճանվեց Ալէքսանդրոպոլի գաւառական բժիշկ Ի. Ա. Գուլպինսկի։ Հանգուցեալը լեհացի էր և 1853 թ-ից ծառայում էր Ալէքսանդրոպոլում։ Որպէս մարդ՝ շատ շիտակ անձ էր, որպէս բժիշկ՝ վերին աստիճանի ազնիւ և մարդասէր։

Ամբողջ 41 տարի ծառայեց մեր քաղաքի մէջ և միշտ անշահասէր և կարեկից կերպով։ Նրա ընդունարանը միշտ լի էր լինում քաղաքացի և գիւղացի հիւանդներով և ամենքն էլ գոհ սրտով հեռանում էին, օրհնելով մարդասէր բժշկի կեանքը, որ թշուառներին կարեկից էր և հոր պէս խնամում էր։ Մանաւանդ խոլերայի համաճարակի միջոցին նա մեծ օգնություն ցոյց տուեց։

Դեկտեմբերի 29-ին կատարվեց յուղարկաւորությունը, որին, չը նայելով սարսափելի ցրտին, ներկայ էին հազարաւոր մարդիկ ամեն դասակարգից։ Այսօր, դեկտեմբերի 30-ին, տեղի ունեցաւ հանգուցեալի թաղումը։ Այստեղի հայ-կաթոլիկների եկեղեցում պատարագը մատուցվեց. ներկայ էր ահագին բազմություն թէ քաղաքացիներ և թէ պաշտօնական անձինք։ Ներկայ էին նաև հայոց և ուղղափառ հոգեւորականության ներկայացուցիչները։ Պատարագիչ հայր Պողոս Նահապետեան մի կարճ քարոզ խօսեց, շեշտելով հանգուցեալի հասարակական ծառայությունների, մանաւանդ նրա ազնիւ և անշահասէր բնաւորության վրա։ Երեկոյեան ժամը 4-ին տեղի ունեցաւ թաղումը. թաղման միջոցին ճառեր խօսեցին երկու քահանաներ։

Դագաղի վրա դրվեցին 12 պսակներ՝ քաղաքի հասարակությունից, իր յարգողներից, բարեկամներից և ընկերներից։ Հանգուցեալին թաղեցին, քաղաքացիների խնդրանքը, հայ-կաթոլիկների եկեղեցու գաւթում։

Շիրակեցի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Մշակի» այս համարը բաղկացած է թերթ ու կէսից։

—

Կ. Պոլսից մեզ գրում են. «Յունվարի 4-ին Մատթէոս պատրիարքը այցելություն գնաց Ռուսիոյ, Ֆրանսայի և Անգլիոյ դեսպաններուն, որոնք իրենց թարգմանները պատրիարքարան ղրկած էին՝ շնորհաւորելու նորընտիր պատրիարքի պաշտօնը։ Միւս օրը անգլիական դեսպան՝ սըր Ֆիլիպ Քըրրի շտապեց փոխադարձ այցելություն տալ պատրիարքին։ Տեսակցությունը մի ժամից աւելի տեւեց»։

—

Էջմիածինը երկար ժամանակ չէր ուզում տպել իր հաշիւները, որպէս զի հասարակությունը կարողանայ իմանալ, թէ ինչքան եկամուտ ունի իր կրօնական կենտրոնը և ինչքան ծախս։ Այդ բաւական չէ։ Տարիների ընթացքում մեր առաջարկությունը, թէ պէտք է տպել վանքի մանրամասն հաշիւները, առաջ էր բերում տրտունջ և կատաղություն հայոց հոգեւորականների շրջանում։ Սրանից երկու տարի առաջ, տեղակալության ժամանակ, այդպիսի զեղեցիկ փորձ եղաւ, բայց տարաբաղդաբար, այդ փորձը ընդհատվեց։ Շատ ուրախ ենք, որ վերջապէս Էջմիածինը հասկացաւ դրա անհրաժեշտությունը, «Արարատի մէջ այս օրերս տպագրելով 1895 թ-ի նախահաշիւը։ Յոյս ունենք, որ նախահաշիւին կը յաջորդի և հաշիւը, և հասարակությունը կը ծանօթանայ մայր աթոռի եկեղի և մուտքի գործերին։

—

Կ. Պոլսից մեզ գրում են յունվարի 7-ից. «Էջմիածնի Կաթողիկոսի անդրանիկ կոնդակը, որ կրում է 1893 թ. դեկտեմբեր 15 թվականը, և որը Աշըգեան, թիւրք կառավարության համաձայնությամբ, թոյլ չը տուեց կարդալ եկեղեցիների մէջ, Մատթէոս պատրիարքը երկկ հանդիսաւոր կերպով կարդացնել տուեց Պոլսոյ եկեղեցիներու մէջ»։

—

Մենք կարծում ենք, որ ամենայն հայոց կաթողիկոսը հասարակության ցանկության թարգման հանդիսացած կը լինէր, եթէ բարեհաճէր արքեպիսկոպոսություն շնորհել Մատթէոս Իզմիրլեանին, որ բարձրացել է Կ. Պոլսի պատրիարքական գահը եպիսկոպոսական աստիճանով։

—

«Сынъ Отечества» հաղորդում է, որ բարձրագոյն կառավարության նախաձեռնությամբ ներքին գործերի մինիստրության մէջ պէտք է կազմվի մի մասնաժողով, որին պէտք է յանձնվի վերաքննել ցենզուրական արտասահմանեան կանոնադրությունը։ Բացի ցենզուրական կոմիտէի անդամներից՝ այդ մասնաժողովը կը մտնեն գրեթէ բոլոր մինիստրությունների, նոյնպէս և գիտության ակադէմիայի ներկայացուցիչները, մի քանի պրոֆէսորներ համալսարանից, բժշկական ակադէմիայից, ֆիլոլոգիական ինստիտուտից և ուրիշ բարձրագոյն ուսումնարաններից։ Արտասահմանի ռուսաց բոլոր դեսպաններին պէտք է հարցնվի, թէ արտասահմանում հրատարակվող որ լրագիրներն ու հանդէսները, նրանց կարծիքով, պէտք է Ռուսաստանում ենթարկվեն գրաքննության, որովհետև մտադրություն կայ թոյլ տալ, որ մեծ քաղաքական թերթերն ու հանդէսները Ռուսաստան մտնեն, առանց գրաքննության ենթարկվելու։

—

Միլանից հեռագրում են մայրաքաղաքի «Новости» լրագրին. «Լաւ է պատում, որ Լևոն XIII-դ պապը միջնորդ դատաւոր կընտրվի հայոց հարցում»։

—

Զորեքշաբթի օր, յունվարի 11-ին, Թիֆլիսի ժողովարանի դահլիճում, յայտնի երգիչ Դաւիդով տուեց մի կոնցերտ, մասնակցությամբ մեզ անծանօթ մի երգչի՝ Ակիմովի։ Երգիչ Դաւիդով ոչ թէ չունի իր նախկին հրաշալի ձայնը, այլ կարելի է ասել՝ բոլորովին կորցրել է ձայնը։ Սակայն, չը նայած դրան, շնորհալի երգիչը ունի

երգելու այնպիսի ինքնուրոյն, կատարելագործված ձիրք, որ այդ երեկոյեան մեծ զուարճութիւն պատճառեց հասարակութեան։ Նրա երգը, լինի այդ տխուր, յուսահատ հառաչանք, թէ սիրոյ ուրախ արտայայտութիւն, ազդում է և այն էլ շատ խորը կերպով։ Հասարակութեան ցանկութեան համեմատ, շնորհալի երգիչը ի միջի այլոց երգեց «Երկու ձեռքին երկու մոմ» հայերէն երգը։

—

Երիտասարդ նկարիչ Պիրաղեան այս օրերս նուիրել է վրաց ազնուականների դպրոցին մի մեծ նկար։ Ինչպէս բովանդակութեան, նոյնպէս և արուեստի կողմից այդ պատկերը աչքի է ընկնում և ցոյց է տալիս, որ երիտասարդ նկարիչը զուրկ չէ գեղարուեստական իսկական ձիրքից։ Պատկերը ներկայացնում է Փրկչին, որ օրհնում է մանուկներին, բոլորը բնական մեծութեամբ։ Կտաւի գրեթէ կենտրոնում, փոքր ինչ դէպի ձախ, զետեղված է Փրկչի պատկերը։ Այն գոյները, որոնցով նկարված է Աստուածամարդի դիմիչ կերպարանքը, բաւականաչափ ուժեղ չեն, բայց և այնպէս նկարչին մասամբ աջողվել է արտայայտել նրա դէմքի վրա այն անհուն բարութեան, հեզութեան և ներքին արտմութեան ցոլքը, որով տոգորված էր մարդկային ազգի Փրկիչը, երբ տեսնում էր փոքրերին։ Փրկչից դէպի աջ կանգնած է ծնկաչոք հաւատացեալ մայրերից մէկը, որ բերել է իր մանուկին Քրիստոսի օրհնութիւնը առնելու։ Մանուկներին, երիտասարդ նկարիչը, պատկերացրել է շատ աջող։ Մի ինչ որ անսահման մաքուր և հաւատով լի փայլ է արտայայտված նրանց անմեղ հայեաքներում դէպի Փրկիչը։ Չէ կարելի չը շնորհաւորել սկսող նկարչի այս առաջին մեծ աշխատութիւնը։ Թող նա գրաւական լինի նկարչի ապագայ արդիւնաւէտ ստեղծագործութեան։ Նոր սկսողները, նա մանաւանդ տաղանդի կայծեր իրանց մէջ պարունակողները, յաճախ երկչոտ են լինում և ծուլանում։ Նրանք կարծես մոռանում են, որ եռանդը և աշխատանքը, և այն էլ անխոնջ, սիստեմատիքական աշխատանքը միայն զարգացնում են բնական ընդունակութիւնները, կատարելագործում են նրանց և լրացնում են այն թերութիւնները, որոնք երևում են իբրև հետևանք սակաւ պրակտիկայի և անփորձութեան։

—

Մեզ հաղորդում են, որ մեր տոկուն խմբապետ Կարա-Մուրզա Գանձակում պէտք է տայ մի կոնցերտ, յունվարի 21-ին։ Ապա նոյն ամսի 28-ին պէտք է տայ մի կոնցերտ Թիֆլիսում, օրկեստրով և կենդանի պատկերներով։

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսաբնակ Ծղալօր Կորգանեան, ի յիշատակ իր հանգուցեալ կնոջ, նուիրել է՝ 1) Կովկասեան Բարեգործական ընկերութեանը՝ ներքին առաջին փոխառութեան մի տոմս. 2) Հայուհեաց ընկերութեանը՝ 100 ռուբլի. 3) Քահանաների զանձարանին՝ 50 ռուբլի. 4) 200 ռուբլի՝ մի աղքատ աղջիկ ամուսնացնելու համար։

—

Վլադիկավկազից, Գէորգ Պետրոսեանց նուիրեց «Մշակի» 1895 թ-ի մի օրինակ Վլադիկավկազի հայոց ծխական դպրոցին։

—

ԿԱԽԿԱՑԻՑ, Անդրկասպեան երկիր, մեզ գրում են. «Այստեղ գտնվում են մօտ 15—20 հոգի հայեր, որոնք գրեթէ բոլորն էլ վաճառականութեամբ են պարապում. այստեղի առևտուրը սրանց ձեռքումն է։ Չենք կարող մատնանիշ չանել այդ մի բուռն հայերի մի ցաւալի յատկութեան վրա, այդ իրար հետ ունեցած անհամերաշխութիւնն է, որը, ի հարկէ, բոլորովին ցանկալի չէ»։

—

ՄԵԾ-ԱՐԽԱԻԼԻ գիւղից մեզ գրում են. «Մօտ օրերս այստեղ 12—13 տարեկան մի տղայ նշանեցին 18 տարեկան աղջկայ հետ։ Եւ տգէտ քահանան էլ, ի հարկէ, մի քանի կօպէկ ստանալով, կը պսակի դրանց...

—

ՊԵԱՏԻԳՕՐՍԿԻՑ մեզ գրում են. «Ամսիս 1-ին հայոց հասարակութիւնը հաւաքվել էր դպրոցի շինութեան մէջ, երեխաների համար կազմած տօնածառի հանդիսին մասնակից լինելու։ Հանդէսն սկզբից մինչև վերջը անցաւ մեծ աջողութեամբ. փոքրիկների երգած երգերը, կարդացած ոտանաւորները ու ուսուցչի ճառը մեծ ոգևորութիւն պատճառեցին հանդիսականներին։ Տօնախմբութիւնը վերջացաւ մանկական պարերով։ Զը-ցանկանալով, որ հանդիսի գլխաւոր նպատակը լոկ ուրախութիւն և զուարճութիւն լինի և այդ էլ այն ժամանակ, երբ հաղարաւոր մեր եղբայրներն ու քոյրերը, նոյնպիսի անմեղ մանուկներ, սովի, քաղցի, ցրտի և այլ սոսկալի թշուառութիւնների են ենթարկված, տ. Մարիամ Շահամեան ուսումնարանի դահլիճին կից մի սենեակում բուֆէտ էր սարքել, ուր յարդելի տիկինը հանդիսականներին թէյ, միրգ ու քաղցրաւէնիք էր վաճառում յօգուտ սովեալների։ Հանդիսի վերջում այդ վաճառումից դոյացաւ մի չոչափելի գումար։ Ամսիս 7-ին նոյն դպրոցում կայանալու է մանկական ներկայացում, որին բացի այժմս ուսումնարանում սովորող երեխաներից պէտք է մասնակցեն և աւարտած օրիորդներից մի քանիսը, որոնց յանձնված են համեմատաբար պատասխանատու դերեր։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԼԱԴՍՏՕՆԻ ԾՆՆԴԵԱՆ ՈՒԹՍՈՒՆԱՄԵԱԿԸ

—

Ինչպէս յայտնի է, նորերս կատարվեց Գլադստոնի 80-ամեայ տարեդարձի տօնախմբութիւնը։ Գլադստոն այդ օրը անցկացրեց Հօվարդէնում, իր ընտանիքի և մօտիկ բարեկամների շրջանում, որոնք հաւաքվել էին նրա մօտ, և որոնից դուրս եկաւ միայն մէկ անգամ և գնաց ծխական եկեղեցին, ուր, ինչպէս յայտնի է, նրան ներկայացաւ հայոց պատգամաւորութիւնը։

Վաղ առաւօտից սկսեցին Հօվարդէն տեղալ բազմաթիւ շնորհաւորական հեռագիրներ, ուղերձներ և զանազան ընծաներ մասնաւոր անձինքներից և հիմնարկութիւններից։ Առաջինների թւում ստացվեցին հեռագիրներ Ուէլսի պրինցից և Ուէստմինստերի դքսից, որը նոյնպէս ծաղիկների մի փունջ ուղարկեց Գլադստոնի ամուսնուն։

Զանազան ազատամիտ, արմատական և բանւոր ընկերակցութիւնների և կլուբների կողմից ուղարկված ուղերձների մէջ ուշադրութեան արժանի էր միդլօտիանեան ազատամիտ ընկերակցութեան համակրական ուղերձը, որի մէջ Գլադստոնի նախկին ընտրողները յայտնում են, ի միջի այլոց, հետևեալը. «Մենք միշտ պարծանքով և շնորհակալութեամբ կը յիշենք այն բարերարութիւնները, որ դուք, որպէս մեր ընկերակցութեան անդամ, կարողացաք տարածել ամբողջ երկրի վրա, պաշտպանելով և իրագործելով երկրի մէջ ռէֆորմներ, որոնց նպատակն է խաղաղութիւն, ազատութիւն և ամբողջ ազգի բարձրացումը։»

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՒԱՑԻՑ

—

Կ. Պոլիս, յունվարի 3-ին

Յունուար 1-ի կիրակի առաւն Գում-Գարու Մայր-Եկեղեցին հաւաքուած հայերու հոծ բազմութիւնը շատ նոր լուր մը լսեց Մատթէոս պատրիարքին բերնէն։ Ժողովուրդն իմացաւ թէ Էջմիածնի գահուն վրա ունի կաթողիկոս մը, որուն անունը Խրիմեան է, թէ Վեհափառ Հայրապետը արթուն կը հսկէ իր բոլոր զաւակներուն վրա և կաղօթէ անոնց համար (նոյն իսկ պատրիարքին բառերը)։ Օ՛հ, շատոնց էր որ Էջմիածին, Կաթողիկոս անունները սրբազան բերնէ մը թռելով թունդ չէին հնչած տարագիր հայերու սրտերը։ Ոճիր մըն էր կաթողիկոսի անունը հնչել հայոց ժամուն մէջ։ Իզմիրլեան պատրիարքը, որ «քաղաքագէտ» մը չէ, կարող չէր համակերպել նրբին տեսութեանց, և մոռնալով իր նախորդին թուլամորթ աւանդութիւնները, նոր տարին շնորհաւորեց Պոլսոյ հայերուն աւելցնելով անոնց կաթողիկոսի անունը, ու երբ այս տողերը կը գրեմ, Վեհափառ Հայրապետին շնորհաւորական հեռագիրն ալ հասած է հաւատարիմ ու անձնուէր զաւակին, Իզմիրլեան պատրիարքին։

Միայն ժամուն մէջ չէ որ Իզմիրլեան անքաղաքագէտ է—բառը օլիգարխիային էֆէնդիները կը գործածեն Իզմիրլեանին համար,—կառավարական շրջանակներու հետ ալ անքաղաքագէտօրէն կը վարուի։

Այսքան սերը ալ կը բաւէ.

Քիչ մալ փորձենք ատելութիւնը.

Քաղաքագիտութեան մեծ խնդիրը կը գառնար վերջին օրերս Ալէքթճեան Գրիգորիս եպիսկոպոսին շուրջը։ Պատրիարքը կուզէր իրեն հետ կայսերական պալատ տանել հալածուած եղբայրը։ Էֆէնդիները դիմեցին պատրիարքին՝ «Ի՞նչ կընես, խենթ ես, քաղաքագիտական է մէկտեղ տանել Ալէքթճեանը որ օր մը Մուշ թէ Վան, չենք յիշեր, թիւրք կառավարչին ապտակ ածած է ու անկէ ի վեր աքսորուած կը մնայ ի Պոլիս և 1891-ին ընտրուած կրօնական ժողովին ցանկէն անունն իսկ չընջուեցաւ կառավարութեան հրամանով։

—Այո՛, իմ անունս ալ չընջուեցաւ այդ ցանկէն, պատասխանեց պատրիարքը, բայց այսօր պիտի ներկայանամ Սուլթանին։ Ինչպէս որ Ալէքթճեան անցեալին մէջ ինծի բաղդակից դտնուեցաւ, ներկային մէջ ալ պէտք է մէկտեղ ընթանանք։

Անհնարին եղաւ պատրիարքը ետ կեցնել իր համոզումէն։ Եւ ահա դեկտեմբեր 31-ի օրը Մատթէոս Իզմիրլեան իր հետ ունենալով Ալէքթճեան եպիսկոպոսը, ինչպէս նաև Հմայեակ եպիսկոպոսը, որուն իրաւունքն էր, իբր տեղապահ, հնաւանդ սովորութեան համեմատ, ընկերանալ պատրիարքին կայսերական պալատը։

Այդ այցելութեան մանրամասն նկարագրութիւնը կը գտնէք Կ. Պոլսոյ յունուար 2-ի թերթերուն մէջ. բայց ինչ որ հոն չէք կրնար տեսնել այդ պատրիարքին արտասանած խօսքերն են, ինչպէս նաև իրեն եղած ընդունելութեան աստիճանը։

Ներկայանալով սուլթանի դէմ, պատրիարքը թրքերէն արտասանեց հետևեալը.

«Օգոստափառ արքայ,

«Կամաք Տեառն Ամենակալին և ընտրութեամբ Հայոց Ազգին կոչուելով ի պաշտօն պատրիարքութեան Հայոց Կ. Պոլսոյ Ձեր Վեհափառութեան կողմէ հաստատուելուս և Ձեր Կայսերական ներկայութեան ընդունուելուս պատճառաւ իմ շնորհակալութիւնս յայտնելու անբաւական կը դտնուիմ։

«Այս Կայսերական բարեհաճութիւնը, զոր շնորհեցիք նուաստիս, բարձր առհաւատչեայ մէջ Ձեր Վեհափառութեան ինձ նկատմամբ ունեցած մեծարժէք համակրանաց։

«Օգոստափառ արքայ,

«Ձեր կայսերական համակրանքն և վստահութիւնը առաւել ևս պիտի քաջալերեն զիս անկեղծօրէն և խղճի մտօք կատարելու այն պարտականութիւններն, զորս հոգևոր կոչումս և պաշտօնս կը դնեն վրաս։

«Կը մաղթեմ, որ Բարձրեալն Աստուած հաստատ պահէ զՁերդ Վեհափառութիւն իւր փառապանծ գահուն վրա կատարեալ երջանկութեամբ, ամէն։»

Կայսրը ճառը ընդմիջելով՝ ըսաւ.

«Համբաւդ լսած էի. խրատէ ժողովուրդդ, սրիկայ հայերը, որ հանդարտ կենան»։

Կայսերական դահլիճէն ելլելով՝ երբ զացին հիւրընկալութեան սենեակը, արարողապետ Միւնիր փաշա, պատրիարքին քովը գալով՝ արտասանած խօսքերուն ընդդիմը ուղեց, առաւ տարաւ ու քանի մը բոպէ վերջը ցասկոտ ու այլայլած վերադառնալով՝ հրաւիրեց պատրիարքը, որ մեկնեն։ Կերևի թէ պատրիարքին արտասանած խօսքերուն վրա տարակոյս մնացած ըլլալով՝ ընդդէմն ստուգել հարկ եղած էր լսուածներուն ճշդութիւնը։ Արդ, նկատողութեան արժանի է, որ պատրիարքը բնաւ չը խօսիր հայ ազգին օսմանեան գահուն պարտական եղած շնորհներուն համար, չի հայցեր Սուլթանին ողորմութիւնը իր հաւատարիմ հպատակներուն համար, ու կը համարձակի յայտարարել, թէ իր խղճին համեմատ պիտի խօսի։ Առաջին անգամն է, որ Կ. Պոլսոյ տիրապետող աշխարհակալ Սուլթան Մէհմէդի յաջորդներուն-առջև խեղճ կրօնաւոր մը կը խօսի խղճի ու արժանապատուութեան թելադրած գերագոյն շեշտով մը։ Սասունի ուրուականները աչքերուն առջև, ինչպէս կրնար հայոց պատրիարքը շնորհապարտութեան բառ մը արտասանել իր ազգին կողմէ։ Ո՛չ ապաքէն գերագոյն հեղնութիւն պիտի համարուէր շնորհապարտական արտայայտութիւն մը։

Հաւանական է, որ պիտի ջանան ծածուկ կերպով պատրիարքը «կարգի բերել»։

Մենք կը կարծենք, կամ աւելի ճիշդը կը հաւատանք, որ Իզմիրլեան հիմնապէս անկաշառելի է։ Թերևս խաբուի կեղծ բարեկամներէ,—որոնք զինքն սկսած են շրջապատել,—փորձով գիտենք թէ ամենէն ժողովրդական անձնաւորութիւններն իսկ ինչ թակարդներու մէջ կիյնան և իրենց ժողովրդականութիւնը ինչ տեսակ վտանգներու կենթարկեն, շնորհիւ զիրենք շրջապատողներու։ Կը յուսանք թէ ուրիշներուն դառն փորձը զգոյշ պահէ Իզմիրլեան պատրիարքը։

Մինչ այս մինչ այն, կիսատ ձգեցինք պատրիարքին ուղևորութիւնը։

Կայսերական պալատէն վերադառնալով Իզմիրլեան պատրիարք գնաց այցելեց մեծ-եպարքոսին, արտաքին, ներքին և դատական գործերու նախարարներուն։ Ամենքն ալ պատրիարքին յայտարարեցին, թէ կը յուսան, որ կառավարութիւն ու պատրիարք, իրարու փոխադարձ օգնելով՝ ամեն դժուարութիւն կը լուծեն։ Ամենուն ալ պատրիարքը մէկ բառով կը պատասխանէ.

—Ինշալլահ։

Հիմա ալ դեսպանական մարմնին այցելութիւններն են, որ կընդունի։ Ռուսիոյ դեսպանատան առաջին թարգմանէն յետոյ եկան ֆրանսական ու անգլիականը. այս վերջինը երկու ժամ տեսակցեցաւ պատրիարքին հետ։

Սովորութիւն է, որ նորընտիր պատրիարքին նախ շնորհաւորական այցելութեան կուգան դեսպանատուններու առաջին թարգմանները. յետոյ պատրիարքը ինք այցելութեան կերթայ և դեսպաններն ալ փոխադարձ այցելութեան կուգան պատրիարքին։

Անկէ վերջ յարաբերութիւնները մշակելը պատրիարքին գործն է։

***

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՒԱՑԻՑ

—

Սամսոն, դեկտեմբերի 29-ին

Կառավարութեան զրդռիչ պրօպագանդան այնչափ յուզեց թիւրք խուժանը, որ եթէ քաղաքի հրամանատար փաշան չը լինէր, այսօր Տրապիզոնի քրիստոնեայ ժողովուրդը սասունցոց բաղդակից պիտի տեսնայիք։

Կառավարական մի քանի բարձր պաշտօնեաներու թելադրութեամբ և նախագահութեամբ, 15—17 օր առաջ գաղտնի պատրաստութիւն կը տեսնեն թիւրք սրիկաներ, մի փառաւոր ջարդ տալու համար կեավուրներուն։ Լուրը հրամանատար փաշային ականջը կը հասնի, որ շտապելով կուսակալի մօտ, կը յայտարարէ. «Այս ինչ յիմարութիւն է, որ գործ կը դրուի, դեռ մէկ աղտէն չը մաքրուած, այս փորձանքն ալ պիտի բերենք մեր գլխուն. 5—10,000 հայի կոտորած, այն էլ Տրապիզոնի պէս քաղաքի մը մէջ, չէ կարելի. այն միւսը ուրիշ էր. աշխատեցէք գործին առաջը առէք, եթէ այդ տեսակ յարձակում պատահի, գիտցած եղիք որ զինուորները պիտի արձակեմ խուժանին դէմ, յանուն կառավարութեան շահերուն»։

Ահա այսպէս. եթէ մի օր յետոյ հրամանատարը իմանար, կոտորածը վերջացած պիտի ըլլար շատ յաջողութեամբ, վասն զի քրիստոնեաները բոլորովին անգիտակ անցած դարձածին, անպատրաստ և հանգիստ կը քնանային։

Այս երրորդ անգամն է, որ Տրապիզոնի մէջ այսպիսի պատրաստութիւններ կըլլան. առաջինը 1878-ին ռուս-թրքական պատերազմի ժամանակ, երկրորդը 1890-ին Պոլսոյ ցոյցէն յետոյ, իսկ երրորդը հիմա՝ 1894-ին, Սասնոյ կոտորածէն ու այսչափ խնդիրներէն անմիջապէս վերջը։ Գէթ սա վերջինը լինէր...

Սամսոնէն Տրապիզոն փոխադրուած են 17 հայ բանտարկեալներ, բոլորն ալ անմեղ։ Սամսոնի մէջ շատ մը հայերու հետ երկու քահանայ ալ բանտարկուած են ամիսէ մի վեր, առանց որ և է հիմնական փաստի և լոկ Զարշամպայի ու Իւնեայի գայմագամներու գաղանութեան, կաշառակերութեան զոհ։ Բաբերդի մէջ ալ նմօրինակ բանտարկութիւններ տեղի ունեցած են. արդէն երկու բաբերդցի 6 ամիսէ ի վեր տեղւոյս բանտը կը հեծեն, առանց որ և է յանցանք ունենալու և հարցաքննութեան ենթարկուելու։

Տրապիզոնում զիշերային պահապաններու կազմակերպութիւնը փութով առաջ կը տարուի թէ քաղաքի և թէ շրջակայ ամեն գիւղերու մէջ. 40—50 տունէ բաղկացեալ հայ գիւղ մը, որ աղքատութեան, խեղճութեան մէջ կը տառապի, ամեն տարի վաշխառուներ, միւթէզիմներ, հարկահաւաքներ և այլ պարազիտներ անխնայ իւր արիւնը ծծելով կմախք դարձեր, մնացեր է, աշխատող ուժերը բոլորն ալ պանդխտած են, ինչ չափ դառն պիտի լինի գիւղացոց վիճակը և ըզգացած սարսափը, ահ ու դողը, երբ իրենց հրաման կը տրուի կառավարութենէ, թէ 4 պահապան պիտի ունենաք (երկուսը անպատճառ թիւրք) և ասոնց ամսականները դուք պիտի վճարէք տարին 7200 ղրուշ։

Գ.—ին

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Սովուղ-Բուլաղ, յունվարի 1-ին

Նորտարին հասաւ։ Ամեն մի հիմնարկութիւն, ամեն մի հաստատութիւն մտածում է իր առաջիկայ տարվայ գործունէութեան համար։ Ծրագիրներ են պատրաստում, փոփոխում, կատարելագործում, որպէս զի կարողանան իրանց ստանձնած գործը բարեխղճութեամբ կատարել։

Բայց արդեօք մտածող կայ պարսկական Քրդստանում ապրող, լեզուն մոռացած հայերի համար. արդեօք ժողովրդի առաջնորդները մտածում են թեթևացնել այս խեղճ ժողովրդի ծանր վիճակը։ Վստահութեամբ կասենք,—ոչ..

Մինչև այժմ քանի քանի առաջնորդներ են փոխվել Ատրպատականում, քանի քանի փոփոխութիւններ են մտցրել Թաւրիզում, բայց երբէք չեն մտածել Պարսկաստանի մի անկիւնում, վայրենի քիւրդի հարևանութեան մէջ ապրող աղքատ ու խեղճ հայի վիճակի վրա։ Հոգևոր մխիթարութիւնից զուրկ, ուսումից և ուսուցչից զուրկ, վերջապէս, բանը այնտեղ է հասել, որ նոյն իսկ ամուսնութեան ծէսը կատարվում է թիւրք մօլլայի ձեռքով, մեռելը թաղվում է առանց քահանայի և առանց արարողութեան,-ահա այս է տեղացի հայերի աննախանձելի վիճակը։ Եթէ մի օտարական պատահմամբ սրանց մէջը ընկնի, սրանց հայութիւնը միայն չորեքշաբթի և ուրբաթ օրերից կարող է իմանալ, երբ ժողովուրդը պաս է պահում։

Անցեալ ամիս թեմական առաջնորդը մի առաջադրութիւն էր արել իր փոխանորդին. ինչ էք կարծում, ինչ առաջադրութիւն. ի հարկէ, պ տ ղ ի փ ո ղ ի համար էր, էլ ուրիշ ինչ գործի համար Ատրպատականի թեմականները կը յիշեն այս խեղճ արարածներին։ Մենք անձամբ ներկայ էինք, երբ խեղճ գիւղացիները փոխանորդին յանդիմանում էին ասելով. «Ե՞րբ ես մեր մեռելը կանոնաւոր թաղել տուել, երբ ես մեր նորածինը ժամանակին մկրտել տուել, երբ ես քահանայ ուղարկել պսակի համար, վերջապէս երբ ենք պատարագի երես տեսել, որ հոգեբաժին ես ուզում մեզանից. ասենք որ առաջնորդը այդ ամենը աչքով չէ տեսել, դու հօ ականատես ես, մեր վիճակն էլ քեզ քաջ յայտնի է. ունենք, որ մերժում ենք»... Այդ տեսակ խօսքերը, ի հարկէ, չեն ազդում անզգայ մարդկանց վրա, որոնք միայն առնել, հաւաքել և պահանջել գիտեն։ Այդ քաւական չէ. փոխանորդը սկսում է ժողովուրդին վախեցնել ասելով. «Եթէ ձեր կամքով չէք տայ, վաղը Թաւրիզի մի քահանայ կը գայ, թէ իր ծախքը և թէ պտղի փողը ոյժով կառնի»։ Խեղճ գիւղացին պարտք է անում և փոխանորդին ու առաջնորդին տալիս...

Պարտաւորութիւն ենք համարում Ատրպատականի թեմական առաջնորդին յիշեցնել, որ իրան յանձնված հօտի մի մասը գտնվում է պարսկական Քրդստանում, Սուլղուզում, Դարաշաքում և այլ այդպիսի մոռացված տեղերում։ Թող մտածէ դրանց մասին. մինչև այժմ Ատրպատականի թեմականները մտածել են միայն Թաւրիզի համար, այժմ թող թողնեն Թաւրիզը, քանի որ այդ քաղաքի ժողովուրդը քիչ շատ ինքնաճանաչութեան է հասել, մի քիչ էլ թող մտածեն իրանց հօտի հիւանդ մասի համար, եթէ իսկապէս հովիւ են։

Վ.—Ն

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 յունվարի։ Ներկայացան Թագաւոր Կայսրին՝ երեքշաբթի—կովկասեան կազակների դիվիզիայի գլխաւոր Սաֆոնով, և կուբանեան կազակների զօրքի շտաբի գլխաւոր Դերշելման։ Երէկ ներկայացաւ Երևանի նահանգապետ Ֆրեզէ։

Այսօրվան բօրսան յուզված դրութեան մէջ էր ֆինանսների մինիստրի շրջաբերականի պատճառով։ Բոլոր բանկային և արդիւնաբերական ակցիաները գնի մէջ ընկան։

Աւարտվեցան արդարադատութեան մինիստրութեան կողմից հրաւիրված աւագ նախագահների և դատաստանական պալատների պրոկուրօրներից կազմված համագումար ժողովի նիստերը, որոնք կապ ունէին արդարադատութեան մինիստրի նախագահութեան տակ կազմված յանձնաժողովի պարապմունքների հետ՝ դատաստանական մասի օրէնսդրութիւնը վերափոխելու վերաբերմամբ։ «Юрид. Газета» լրագրի խօսքով, մտադրութիւն կայ մի քանի մասնաւոր փոփոխութիւններ, բարւոքումներ մտցնել դատաստանական այն մասի կազմակերպութեան մէջ, որ յանձնված է այժմ զէմստվոյի գլխաւորներին։

ԼՕՆԴՕՆ, 12 յունվարի։ Վախճանվեց յայտնի պետական գործիչ Չէրչիլ։

ՊԱՐԻԶ, 13 յունվարի։ Բուրժուա վերջնականապէս հրաժարվեց մինիստրութեան կազմակերպութիւնից։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՑԱՅՏՆՈՒՄ Է

—

ԲԱԳՈՒ. Մ. Տ. Գր. Միրզայեան. Ձեզ այժմ «Մշակ» ուղարկվում է ճիշդ հասցէով։ Սխալմամբ երկու համար ուղարկվել է Բալախան, փոխանակ Բագու։

ԲԱԼԱԽԱՆ. Ցարութիւն Գրիգորեան։ Ձեզ «Մշակ» ուղարկվում է առաջին համարից սկսած։ Մենք զարմանում ենք, որ մինչև այժմ չէք ստացել։ Տեղեկացէք այդտեղ պօստատանը։

ԵՐԵՒԱՆ. Ս. Տ. Մ. այն պարոնը, որի մասին հարցնում էք, վճարել է իր բաժանորդագինը։ «Մշակ» կուղարկվի և ձեր ուղարկած նոր հասցէով։

ՍՈՒԽՈՒՄ. Ս. Ֆ. Ձեր յիշատակած բոլոր բաժանորդներին ուղարկվում է «Մշակ»։ Ստուգեցէք պօստատանը։

ԱԽԱԼՔԱԼԱՔ. Զ. Ա. Ձեր յիշատակած անձին «Մշակ» ուղարկեցինք յունվարի 1-ից սկսած։ Իսկ այդ թիւրիմացութիւնը անպատճառ կը պարզենք։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ Մ. ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱԳՈՒԻ ՀԱՅՈՑ
ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Խորհուրդը խնդրում է անցեալ 1894 թ. տարեկան անդամներին նորոգել իրանց անդամակցութիւնը և ներկայ 1895 թուականի համար, վճարելով իրանց անդամակցութեան 5-ական ռուբլին ընկերութեան դանձապահ պ. Եղիշէ Նարաթեանցին։

1—5

կենտրոնական գրավաճառանոցում վաճառվում են

ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆՑԻ

1. ԱՑՑ ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ . 60 կ.
2. ԺՈՂՈՎՐԴԻ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ. 20 կ.

1—10

Թարգմանվում է արդէն „ԿԼԷՕՊԱՏՐԱ, վէպը եգիպտական կեանքից։“ Ուսուցիչներ՝ Ա. Թ. Ինկոյեանց և Ա. Ա. Առաքելեանց։ 1—1

“ԱՂԲԻՒՐ“ և „ՏԱՐԱԶ“

Շարունակվում է 1895 թ. բաժանորդագրութիւնը։

Խմբագրութիւնը և գրասենեակը (Գոլովինսկի պրոսպեկտ տ. № 7 կայսերական երաժշտական ուսումնարանի հանդէպ) բաց է ամեն օր առաւօտեան ժամը 10—2-ը, իսկ կիրակի և տօն օրերը 10-11 ժամը։

1—3

ԱՆԽԱՐԴԱԽ ՍՈՒՐՃ

Պատիւ ունիմ յայտնելու արդոյ հասարակութեան, որ Գոլովինսկի Պրոսպեկտի վրա, Բէյտէրի տանը (Կրուժօկի դիմաց), նոր բացված խանութումս Անգլիայից ստացած նոր ձեւի մեքենայով պատրաստում եմ թարմ և անխարդախ ՍՈՒՐՃ բոված, աղցած և այլն, յաճախորդների ներկայութեամբ անգամ։

Հրաւիրում եմ առանձնապէս արդոյ յաճախորդների ուշադրութիւնը՝ համեմատութեան առնելու իսկականը այլ և այլ խառնուրդներով պատրաստված կեղծ սրճի հետ։ Ուր նաև ծախվում են տեղական լրագրիներ։

2—5 Մ. Ց. Գասպարեան

ԿԱՏԱՐԻՆԷ ՖՈՑԵԱՃԵԱՆ, ՍԱԹԵՆԻԿ և ԱՒԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ, ՄԿՐՏԻՉ ՖՈՑԵԱՃԵԱՆ սրտի ցաւօք յայտնում են առաջինը իր ամուսնու, երկրորդները իրանց հօր և աներօջ, երրորդը իր եղբօր

ԿԱՐԱՊԵՏ ՖՈՑԵԱՃԵԱՆԻ

մահը, խնդրում են ազգականներին և ծանօթներին շնորհ բերել յուղարկաւորութեանը, երկուշաբթի, յունվարի 16-ին, առաւօտեան ժամ 10-ին, իր սկզբական տանից, Վանքի փողոց № 11 դէպի Վանքի Մայր-եկեղեցին։ Ամբիծքը կատարվելու է կիրակի, յունվարի 15-ին, երեկոյեան 6 ժամին։ 1—1

„ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ“

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ԱՐՈՒԵՍՏԳԻՏԱԿԱՆ

1895 - Թ. ՏԱՐԻ

Կը հրատարակվի ներկայ տարին նոյն ծաւալով՝ աւելի ճոխ և բազմակողմանի բովանդակութեամբ։

„Ամսօրեայ Հանդէսի“ տարեկան բաժանորդագինն է 10 ֆրանք=4 ռբ. թղթադրամ։—Կէս տարվանը՝ 6 ֆր.=2·50 ռբ.։

„Հանդէսի“ բաժանորդ դրուիլ ցանկացողները դիմելու են կամ գործակալաց և կամ ուղղակի խմբագրութեան հետևեալ հասցէով.

A la Rédaction de la Revue „HANTESS“ Au Couvent des RR. PP. Méchitharistes.

3—3 *VIENNE (Autriche) VII/2 Mechitharistengasse 4.*

ОТКРЫТА ПОДПИСКА НА **1895** ГОДЪ

НА ЕЖЕДНЕВНУЮ ГАЗЕТУ

„НОВОЕ ОБОЗРѢНІЕ“

(двѣнадцатый годъ изданія)

Въ 1895 г. «Новое Обозрѣніе» будетъ выходить въ Тифлисѣ, какъ и въ прошлые годы, ежедневно, по программѣ газеты литературной, общественной и политической.

Условія подписки: съ пересылкою и доставкою: на годъ—10 р., на полгода—6 р., на три мѣсяца—3 р. 50 к., на одинъ мѣсяцъ—1 р. 50 к. За границу: на годъ—17 р., на полгода—9 р., на три мѣсяца—5 р. (Подписка принимается не иначе, какъ считая съ перваго числа любого мѣсяца).

Для годовыхъ подписчиковъ, какъ городскихъ, такъ и иногородныхъ, обращающихся непосредственно въ контору редакціи, допускается разсрочка, на слѣдующихъ условіяхъ, при подпискѣ вносится—3 р., къ 1-му марта—2 р., къ 1-му мая—3 р. и къ 1-му сентября—2р.,

Подписка и объявленія принимаются Въ Тифлисѣ: въ конторѣ газеты, Барятинская ул., № 8: Иногородные адресуютъ свои требованія: **Въ Тифлисъ, въ редакцію «Новаго Обозрѣнія».**

Лица, подписавшіяся (безъ разсрочки) на годовое изданіе «Новаго Обозрѣнія» 1895 г. въ настоящее время, будутъ безплатно получать газету въ текущемъ году со дня подписки.

Открыта подписка на **1895** годъ

50-й годъ **„КАВКАЗЪ.“** 50-й годъ

Редакторъ-издатель Ю. Н. МИЛЮТИНЪ.

ПОДПИСНАЯ ЦѢНА:

Городская.		Иногородная.	Заграничная.
На 12 мѣсяцевъ	11 р. 50 к.	13 руб.	18 р. 40 к.
„ 11 „	11 „ — „	12 „	— „
„ 10 „	10 „ — „	11 „	— „
„ 9 „	9 „ — „	10 „	— „
„ 8 „	8 „ — „	9 „	— „
„ 7 „	7 „ — „	8 „	— „
„ 6 „	6 „ — „	7 „	10 „
„ 5 „	5 „ — „	6 „	— „
„ 4 мѣсяца	4 „ 50 „	5 „	— „
„ 3 „	3 „ 50 „	4 „	6 „
„ 2 „	2 „ 50 „	3 „	— „
„ 1 мѣсяцъ	1 „ 50 „	1 „ 75 к.	2 „

Подписка принимается съ перваго числа каждаго мѣсяца на всѣ сроки отъ одного до двѣнадцати мѣсяцевъ.

Желающіе подписаться съ разсрочкою вносятъ 2 р. при подпискѣ и по 1 р. къ первому числу каждаго послѣдующаго мѣсяца до погашенія всего причитающагося платежа

Плата за объявленія (со строки петита или занимаемаго ею мѣста): На послѣднихъ страницахъ: съ мѣстныхъ объявленій (кавказскихъ)—8 коп., съ прочихъ—10 коп., за каждый разъ. На первыхъ страницахъ вдвое. За большія или многократныя объявленія по соглашенію.

Подписка и объявленія принимаются въ конторѣ «КАВКАЗА»: Тифлисъ, Дворцовая улица, домъ Тифлисскаго Дворянскаго Земельнаго Банка.

Частныя объявленія изъ С.-Петербурга, Москвы, Царства Польскаго, Прибалтійскаго края и за границы принимаются исключительно въ Центральной Конторѣ объявленій торговаго дома Л. и Э. Метцль и К° въ Москвѣ (Мясницкая, домъ Спиридонова) и въ его отдѣленіи въ С.-Петербургѣ (Большая Морская, № 11).

ПОДПИСКА НА **1895** ГОДЪ

НА ГАЗЕТУ

„ТИФЛИССКІЙ ЛИСТОКЪ“

ПОДПИСНАЯ ЦѢНА:

Въ Тифлисѣ		Для иногородныхъ	
Съ доставкой: на годъ	5 р. — »	Съ пересылкой: на годъ	6 р. — »
» » полгода	3 » — »	» » полгода	3 » 50 к.
» » 3 мѣс.	1 » 75 к.	» » 3 мѣс.	2 » — »
» » мѣсяцъ	— » 75 »		

Подписка принимается **исключительно въ конторѣ „Тифлисскаго Листка“** (*Тифлисъ, Головинскій проспектъ, д. Ротинова. № 3-й*) и на указанные сроки, съ перваго числа каждаго мѣсяца.

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ
Ա. ՏԷՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆՑԻ

Ընդունում է երթևեկ, կիսագիշերօթիկ և գիշերօթիկ աշակերտներ, պատրաստում է գիմնազիայի, բեալական ուսումնարանի, կադետների կորպուսի և այլ ուսումնարանների համար: Սոլոլակ, Գանձակայա փ. № 11. (№ 127) 3—10

ՆԱԽԱԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ

Մեծ պահանջը և ահագին հռչակը մեր հնարած

ԾԱՂԿԵԱՑ Օ-ԴԷ-ԿՈԼՕՆԻ

ԳԼԻՑԵՐԻՆԵԱՆ ՍԱՊՕՆԻ ՆԿԱՐՆԵՐՈՎ,

ԳԼԻՑԵՐԻՆԵԱՆ ՓՕՇԻՒ,

ԷԿՍՏՐԱԿՏ ՊԱՐՍԿԱԿԱՆ ԵԱՍԱՄԱՆԻ ԵՒ ՐԵԶԵԴԱՅԻ ԾԱՂԻԿՆԵՐԻՑ

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԱՐԿՂԻԿՆԵՐ *և այլն*

սիրում է մեզ հետ մրցողներին ՆՄԱՆԵՑՆԵԼ, *ոչ միայն անունները, այլ և մեր մանագիտութիւնների ներքին սարքին, որպէս զի զրաւով մոլորեցնեն հասարակութիւնը և այդպիսով մեծացնեն իրանց արդիւնքների վաճառումը, և այդ պատճառով խնդրում ենք պատուարժան գնողներին, մեր արդիւնքները գնելու ժամանակ, առանձին ուշադրութիւն դարձնել ֆիրմայի և գործարանական մարկայի վրա:*

Բարձրագոյն հաստատված ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԲՐՕԿԱՐ ԵՒ ԸՆԿ.

11—12 (№ 74—*ամ.* 15)

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ
ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԵՐԻ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՐՈՒԹԻՒՆԸ

ԳԻՆԸ 20 ԿՕՊԷԿ

Թիֆլիսում վաճառվում է „Մշակի“ խմբագրատանը, Նոյնպէս և Դվորցովայա փողոցի վրա հետևեալ խանութներում՝ Եփրեմ Ծատուրեանի լամպաների մագազինում և Տէր-Յովսէփեանի ծխախոտի խանութում: (№ 143)

НѢМЕЦКАЯ ГОСТИННИЦА

HOTEL NIEMIECKI, „ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՒՐԱՆՈՑ“ *գտնվում է* **ՎԱՐՇԱՎԱ-ՅՈՒՄ**, *քաղաքի կենտրոնում, նորից վերաշինված, ունի 90 կահաւորված նոմէրներ, որոնց սարք ու կարգը ամենալաւ արտասահմանեան հիւրանոցների սենեակներին է նման: Նոմէրների գինը 50 կոպէկից մինչև 3 ռուբլի օրական, անկողնով և ծառայով: Հիւրանոցում կայ ընթերցարան-զրաղարան, որտեղ ստացվում են հայերէն „Մշակ“ և „Նոր-Դար“ լրագիրները, հիւրերի համար անվարձ: Կայ ռէստորան, տելեֆոն, քաղցրեղէնների խանութ, լրագիրներ:*

Հիւրանոցի մէջ գտնվում են բոլոր երկաթուղային կայարաններում:

(№ 21) 119—130 (2.)

ԿԱԿԱՕ ԲԼՕՕԿԷՐ

ՍՆՆԴԱՐԱՐ ԽՄԻԶՔ (գլխաւոր պահեստը Ռուսաստանի համար „ԵԱՎԱ“ ֆիրմայի մէջ. (С.-Петербургъ, Большая Морская, 38).

Ծախվում է կօշնիալ և դեղային ապրանքների բոլոր լաւ մագազիններում $^1/_1$, $^1/_2$, $^1/_4$ *և* $^1/_8$ *կիլոգրամանոց թիթեղեայ տուփերի մէջ:*

(GRAND PRIX) *Բարձրագոյն պարգև Անվերպէնի համաշխարհային ցուցահանդիսում 1894 թվին:* (№ 151) 2—50

Ի. Ա. ԲՐՕՆ ՖՕՆ ԲՐԵՆՆԷՐ

Ցանձն է առնում ՀԱՇԻԱՊԱՀԱԿԱՆ, ԴՐԱՍԵՆԵԱԿԻ *և* ԱՌԵՏՐԱԿԱՆ ՄԱՏԵԱՆՆԵՐ *պահելու գործը ամբողջ տարվայ ընթացքում, ռուսերէն, ֆրանսերէն, գերմաներէն, հայերէն և ուրիշ լեզուներով. ստուգում է զանազան առևտրական և արդիւնաբերական հաստատութիւնների հաշիւները և մատեանները, քննում, փակում, բանում, և կազմում է առևտրական մատեաններ. ընդունում է առևտրական մատեանների զանազան թիւրիմացութիւնների քննութիւնը և բացատրութիւնը:*

Այն անձինք, որոնք չունեն հաշուապահներ, բայց ցանկանում են ունենալ կանոնաւոր հաշուապահութիւն, կարող են ունենալ ՃԻՇԴ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԻՐԱՆՑ ԳՈՐԾԵՐԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ ԵՒ ԿԱՆՈՆԱՒՈՐ ՄԱՏԵԱՆՆԵՐ: *Մատեաններ պահելու համար վերցվում է տարեկան 100 ռուբլի և աւելի: Հասցէն* Елизаветинская, № 25, *ոստիկանական վարչութեան վերին յարկում:*

Ուսուցանում է:

ՀԱՇԻԱՊԱՀՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐԱԳԱԳՐՈՒԹԻՒՆ

Վճար { *Հաշուապահութեան ամբողջ կուրսի համար (2—3 ամիս)* 40 ՌՈՒԲԼԻ
{ *Արագագրութեան տեսական կուրսի համար (2 ամիս)* 50 ՌՈՒԲԼԻ

Պարապմունքներ լինում են ամեն օր, երկու ժամվայ ընթացքում: Առաջադէմ պարապմունքների համար ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ *բէալական դպրոցի դիրեկտորից և ուրիշ անձերից:* (№ 16) (2) 44—100

Նոյեմբերի 20-ից ստացվել է Պաստեորի սիստեմով պատրաստած ԲՐՈՒՍԱՑԻ ԲՕԺՈՅԻ ՍՊԻՏԱԿ ՏԵՍԱԿԻ ՍԵՐՄԸ, *որ արդէն անցեալ տարիներից յայտնի է Կովկասում և Պարսկաստանում իր յատկութիւններով և տուած առատ բերքով:*

Սերմը ստացված է ուղղակի յայտնի „Էկոնոմիտես“ ֆիրմայից:

Գնել ցանկացողները կարող են դիմել՝ ԲԱԹՈՒՄ, ԹԻՖԼԻԶ, ԲԱԴՈՒ, *եղբ. Մնացականեանններին, իսկ* ՆՈՒԽԻ՝ *Աղայ Մուսայ Մահմեդովին:*

Այս հասցէով, Бр. Мнацаканянцъ, Батумъ *կամ* Тифлисъ *կամ* Баку.

(№ 136) (2. *ե.*) 11—25



Ա. ԿՕՊՊԻ
ՖՕՐՏԷՊԻԱՆՆԵՐԻ
ԽԱՆՈՒԹՈՒՄ

(*Միքայէլեան փողոց,* № 132)

Կան մեծ քանակութեամբ նոր դաշնամուրներ, 350 *ռուբլուց մինչև* 450 *ռուբլի արժողութեամբ:*

(№ 119) 23—25

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ 1881 Թ.

„ՌՈՍՍԻԱ“

Ապահովագրական ընկերութեան մէջ

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆԵՐ 20,500,000 ՌՈՒԲԼԻ

Ընկերութեան տոկոսաբեր թղթերը պահվում են պետական բանկում:

Օրինակ: Ընտանիքի հայրը, 34 տարեկան, ապահովագրվում է 5,000 ռ., որ պէտք է տրվի կնոջը և երեխաներին *անյապաղ մահից յետոյ:* Այդպիսի ապահովագրութեան համար նա վճարում է երեքամսեան պրէմիա 30 ռ. 80 ճոպէկ:

Ապահովագրութիւնները ընդունվում են 1000-*ից մինչև* 100,000 *ռ. դումարների մէկ անձի կեանքի համար:*

Ընկերութիւնը ապահովագրում է առանձին շահաւէտ պայմաններով և արտօնութիւններով հիւանդութեան և աշխատանքին անընդունակ լինելու դէպքում:

Ապահովագրական դումարը տրվում է և մնալն դէպքում տարափոխիկ հիւանդութիւնից, խօլերայից և այլն:

Յունվարի 1-*ին* 1894 *թվի* «Ռոսսիա» *ընկերութեան մէջ ապահովագրված էին* 28,246 *անձինք* 75,621,010 *ռուբլի դրամագլխի:*

Ապահովագրողները մասն ունեն ընկերութեան եկամուտներից:

Ապահովագրողների դիվիդենտը 1893 *թվի համար—*12% *է:*

Ապահովագրութեան համար յայտարարութիւնները ընդունվում են և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդվում են վարչութեանը Ս. Պետերբուրգում (Большая Морская, *սեփական տուն,* № 37), *ընկերութեան Թիֆլիսի բաժնում* (Сергіевская, д. № 6) *և ընկերութեան գործակալութիւնների մէջ կայսրութեան բոլոր քաղաքներում:* (№ 85) 3—20

Ազգիս Վեհափառ Հայրապետը հրամայել է գործադրել հայկական դպրոցներում, որպէս ձեռնարկ Սարգիս քահանայ Բէգնազարեանցի աշխատասիրած „ՀԱՄԱՌՕՏ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳԻՐՔԸ“:

Ցայտնելով այս ի զիտութիւն դպրոցական վարչութեանց՝ խնդրում ենք ցանկացողներին առ այժմ դիմել ուղղակի այս հասցէով. Թիֆլիս, Ելիզաւէտեան փողոց, տուն № 45, *աշխատասիրողի այրին:*

Գիրքը կազմած է և արժէ՝ 1) *հատով գնողներին* 60 *կ.,* 2) *տասնից մինչև յիսուն գնողներին* 55 *կ.,* 3) *յիսունից մինչև հարիւր գնողին* 50 *կ.,* 4) *դպրոցական վարչութիւնից վկայված չքաւոր աշակերտներն ու աշակերտուհիները կարող են վճարել* 40 *կ.: Ճանապարհածախսը գնողների վրա է:*

(№ 81) 5—5

Ընկերութիւն

ԲՐՕԿԱՐ ԵՒ ԸՆԿ.

Հնարողներ

„ԾԱՂԿԵԱՑ Օ-ԴԷ-ԿՕԼՕՆԻ“

Զանազան գոյնի

Նորութիւն! տուալէտի ջուր

„Օ-ԴԷ-ԲՐՕԿԱՐ“

Զգոյշ պէտք է լինել կեղծումներից

(*ամ.* 30 № 67)

10—10

Дозволено цензурою, Тифлисъ, 13 Января 1894 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.